

«Կալոփ»-ի Զարգախոյզի Զանաձայն Ղարաբաղցիները Կը Վստահին Ղատարաններուն, Զայաստանցիները՝ Ոչ

Նախկին խորհրդային տարածքներուն մէջ ղատարանների հանդէպ ամենամեծ վստահութիւնը ունին ղարաբաղցիները: Ամերիկեան «Կալոփ» հանրային կարծիքի ուսումնասիրման ընկերութեան կողմէ Հոկտեմբեր 22-ին հրատարակուած հարցախոյզի արդիւնքներու համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան 72 տոկոսը անվերապահօրէն կը վստահին հանրապետութեան ղատարաւական համակարգին:

Վստահութեան այս ցուցանիշը շատ աւելի բարձր է, քան Հայաստանի բնակչութեան կողմէ: «Կալոփ»-ի տուեալներով՝ ղատարաւական համակարգի նկատմամբ վստահութեան մակարդակը Հայաստանի մէջ ընդամէնը 30 տոկոս է: Հայաստանի Հանրապետութեան մէջ հարցախոյզին մասնակցած քաղաքացիներու գրեթէ կէսը՝ 49 տոկոսը, յայտնած են, որ հայաստանեան ղատարաններուն չեն վստահիր:

Դատարաններու հանդէպ վստահութեան մակարդակը ցած է նաեւ Ատրպէյճանի մէջ: Այդտեղ ղատարան համակարգին կը վստահին բնակչութեան 41 տոկոսը, չի վստահիր 36 տոկոսը:

Դատարաններու հանդէպ վստահութեան մակարդակով ամբողջ յետխորհրդային տարածքի ճճճանչցուած պետութիւններու

շարքին առաջին դիրքի վրայ կու գայ Վրաստանը: Հոն ղատարան համակարգին կը վստահին բնակչութեան 51 տոկոսը, թերահաւատ է 22 տոկոսը: Սակայն, ի տարբերութիւն Հայաստանի՝ Վրաստանի մէջ բաւական մեծ թիւ կը կազմեն (27 տոկոս) անոնք, որոնք վստահ են այս հարցով:

Դատարան համակարգի նկատմամբ վստահութեան մակարդակով յետխորհրդային երկիրներու միւս երկու առաջատարներն են Եւրասիական Միութեան հիմնադիր անդամ Պելաուսը եւ Եւրամիութեան անդամ Էստոնիան: Իրարմէ զգալիօրէն տարբեր այս երկու պետութիւններու բնակչութեան մօտ կէսը՝ 47 տոկոսը, անվերապահօրէն կը վստահին ղատարաններու կայացուցած վճիռներուն: Ռուսաստանի մէջ այս ցուցանիշը գրեթէ նոյն մակարդակի վրայ է, ինչ որ Հայաստանի պարագային: Ռուսաստանցիներու միայն 28 տոկոսը կը վստահին ղատարաններու կայացուցած վճիռներուն, 54 տոկոսը՝ ոչ:

Յետխորհրդային տարածքի մէջ ղատարան համակարգի նկատմամբ վստահութեան ամենացած մակարդակը արձանագրուած է Ռքրանիոյ մէջ, ուր սակայն հարցախոյզը կատարուած է վերջին իրարմութիւններէ եւ նախագահի փոփոխութեանէն առաջ:

Ֆրանսայի Դեսպանի Կարծիքով Նախագահներու Զանդիպունը Առիթ Կու Տայ Ձարգացուններ Ունենալ Ղարաբաղի Զարցով

Հոկտեմբերի վերջերուն Փարիզի մէջ նախատեսուած Հայաստանի, Ատրպէյճանի ու Ֆրանսայի նախագահներու հանդիպումը թոյլ կու տայ «բովանդակային նոր զարգացումներ» ունենալ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գծով: Նման համոզմունք յայտնած է Հայաստանի մօտ Ֆրանսայի դեսպան Անրի Ռէնօ:

Հայաստանի մէջ իր դիւանագիտական քառամեայ առաքելութիւնն աւարտող դեսպան Ռէնօն, Երեւանի մէջ իր ունեցած հրաժեշտի ասուլիս ընթացքին խօսեցաւ փարիզեան եռակողմ հանդիպումի մասին:

«Մայիս ամսուն Ատրպէյճանի պաշտօնական, իսկ Հայաստան՝ պետական այցի ժամանակ Ֆրանսայի նախագահը առաջարկեց Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն հանդիպել Փարիզի մէջ: Նպատակն է, բնականաբար, նոր լիցք հաղորդել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացին: Առաջարկը ընդունուեցաւ երկու երկիրներու նախագահներուն կողմէ, եւ մօտ օրերս Փարիզի մէջ կը կայանայ Սարգսեան, Ալիեւ, Օլանտ



Հայաստանի մօտ Ֆրանսայի դեսպան Անրի Ռէնօ

զագաթի ժողովը: Առանց հրապարակելու դիւանագիտական մանրամասնութիւններ՝ միայն նշեմ, որ նպատակը բովանդակային իմաստով նոր լիցք հաղորդելն է բնակչային գործընթացին: Երկրորդ՝ կարեւոր է, որ յաջողուի երկու կողմերուն միջեւ ստեղծել վստահութեան մթնոլորտ, որը կրնայ բերել իրավիճակի փոփոխութեան՝ հայ-ատրպէյճանական սահմանին վրայ», ըսաւ դեսպանը:

Մարտ Էջ 4

Իրանի Նախագահը Զրաւիրուած Է Մասնացելու Ցեղաստանութեան 100-Ամեակին



Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հանդիպումը ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեանի հետ

Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան աշխատանքային այցելութեամբ ժամանած է Թեհրան ուր տեսակցած է Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ: Վարչապետ Աբրահամեան Իրանի նախագահին յանձնած է Սերժ Սարգսեանի հրաւերը՝ յառաջիկայ Ապրիլ 24-ին մասնակցելու Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:

Աբրահամեան յայտնած է, որ իր պաշտօնական այցելութիւնը պիտի նպաստէ հայ-իրանական անտեսական կապերու աշխուժա-

ցումին եւ նոր ներդրումներու ներգրաւումին:

«Հայաստան բարձր կը գնահատէ Իրանի հետ պատմական բարի դրացիական յարաբերութիւնները եւ կը մտադրէ զարգացնել փոխադարձ վստահութիւնը», ըսած է Աբրահամեան:

Ռոհանի իր կարգին կարեւորած է զանազան ոլորտներու մէջ համագործակցութիւնը եւ խոստացած է զարգացնել համատեղ ծրագիրները:

Մարտ Էջ 4

Մամուլի Ազատութեան Առումով Զայաստան 78-րդ Դիրքի Վրայ է, Ատրպէյճան՝ 160-րդ

«Լրագրողներ՝ Առանց Սահմաններու» կազմակերպութիւնը հրատարակած է 2014 տարուայ մամուլի ազատութեան համաշխարհային աղիւսակը, որու վրայ կը շարունակեն տեղեկատուութեան եւ լրագրողներու ազատութիւնն աշխարհի 180 երկրները:

Ըստ այս ցուցանիշին Ֆինլանտա կը գլխաւորէ աղիւսակը յաջորդական 4-րդ տարին ըլլալով: Անոր կը հետեւին Հոլանտան եւ Նորվեգիան:

Կազմակերպութիւն ցուցակի վերջին դիրքերուն վրայ են Թուրքմենստանը, Հիւսիսային Քորէան եւ Էրիթրեան են՝ որպէս «լրատուութեան եւ տեղեկատուութեան սեւ

խոռոչներ եւ կենդանի դժոխք լրագրողներու համար»:

Աղիւսակի համաձայն Հայաստան կը գրաւէ 78-րդ տեղը: Ռուսաստան կը գտնուի կը գտնուի 148-րդ դիրքի վրայ, Ատրպէյճան՝ 160-րդ, Թուրքիան՝ 154-րդ, իսկ Վրաստանը 84-րդ:

Ուշագրաւ է որ, Միացեալ Նահանգները կը գրաւէ աղիւսակի 46-րդ դիրքը, նախորդ տարուայ համեմատ ետ քայլ արձանագրելով՝ 33-րդ դիրքին:

Միացեալ Նահանգներու այս ետ քայլը կապուած է պետական գաղտնի փաստաթուղթեր հրապարակներու նկատմամբ առնուած դատական քայլերուն հետ:

Բակո Սահակեան Արցախ Զրաւիրած Է Օպամային, Փութինին եւ Օլանտին

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան Մինսկի Խումբի համանախագահ երկիրներու ներկայացուցիչներու հետ Ղարաբաղ այցելելու հրաւերներ ուղարկած է Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Պապմային, Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինին եւ Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտին:

«Ամերիկայի ձայնին» տուած իր հարցազրոյցին մէջ ԼՂՀ նախագահը ըսած է. «Մեր կարծիքով, համանախագահ երկիրներու ղեկավարները չեն կրնար լրջագոյն յաջողութիւններու հասնել զբաղուելով մի երկրի, մի ժողովրդի ճակատագրով՝ առանց անմիջական շփումներ ունենալու այդ երկրի հետ»:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Անսպասելի առաջարկ Արցախից

ՅԱԿՈԲԱԴԱԼԵԱՆ

Ամերիկայի Ջայնին տուած հարցազրույցում Արցախի նախագահ Բակո Սահակեանն ասել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ վերջին հանդիպմանը նրանց հետ հրաւերներ է յղել Մինսկի խմբի համանախագահ երկրների նախագահներին՝ Օպամային, Օլանդին եւ Պուտինին հրաւիրելով Արցախ:

«Մեր կարծիքով, համանախագահ երկրների ղեկավարները չեն կարող լրջագոյն յաջողութիւնների հասնել զբաղուելով մի երկրի, մի ժողովրդի ճակատագրով առանց անմիջական շփումներ ունենալու այդ երկրի հետ», ասել է Բակո Սահակեանը: Արցախի նախագահի առաջարկն իհարկէ հետաքրքիր է: Այն Մինսկի խմբի համանախագահ երկրների առաջնորդներին յատկապէս կը հետաքրքրի, երբ նրանք տեղեկանան, որ փաստօրէն զբաղուած են Արցախի, Արցախի ժողովրդի ճակատագրով: Նրանք հազիւ թէ գլխի ընկած լինէին դրա մասին: Օպամային, Օլանդը եւ Պուտինը անկասկած համոզուած են, որ զբաղուած են այլ հարցերով՝ աւելի խոշոր, ընդգրկուած, ու զուտ այդ համատեքստում էլ ստիպուած են առնչուել Արցախի հակամարտութեանը: Շատ հաւանական է, որ եթէ նրանց օրակարգում կայ որեւէ

երկրի եւ ժողովրդի ճակատագրի հարց, ապա դա ոչ թէ Արցախն ու արցախցիներն են, այլ Ամերիկան ու ամերիկացիները, Ֆրանսան ու ֆրանսիացիները, Ռուսաստանն ու ռուսաստանցիները:

Արցախի ու Արցախի ժողովրդի ճակատագրով պէտք է զբաղուի Արցախի իշխանութիւնը, իսկ Օպամային, Օլանդն ու Պուտինը Արցախի մասին պէտք է գիտենան ոչ թէ Արցախ գալով, այլ տեսնելով սե-

Արցախի ու Արցախի ժողովրդի ճակատագրով պէտք է զբաղուի Արցախի իշխանութիւնը, իսկ Օպամային, Օլանդն ու Պուտինը Արցախի մասին պէտք է գիտենան ոչ թէ Արցախ գալով, այլ տեսնելով սեփական ճակատագիրը տնօրինելու Արցախի ունակութիւնը

փական ճակատագիրը տնօրինելու Արցախի ունակութիւնը: Իսկ դա զուտ բարեկարգ Ստեփանակերտը չի, որովհետեւ Օլանդը, Օպամային ու Պուտինը բազմապատիկ աւելի բարեկարգ բաներ են տեսել: Արցախը թէ նրանց, թէ ընդհանրապէս աշխարհին պէտք է ներկայանայ քաղաքական որակներով, ինչն իհարկէ գործնականում անհնար է առանց Հայաստանի:

Որեւէ բան «տեսնելու» եւ «ճանաչելու» համար աշխարհաքաղաքական վճռորոշ դերակատար-

ները որեւէ տեղ չեն գնում, այլ սպասում են, թէ երբ եւ ինչով կարող է աչքի ընկնել տուեալ «սուբիեկտը», կամ կարող է աչքի ընկնել որպէս սուբիեկտ, թէ ընդամենը օբիեկտ:

Ազգերի եւ ժողովուրդների մրցակցութիւնում միշտ էլ առաջնային նշանակութիւն ունեցել է այն, թէ ամէն մի երկիր ու ժողովուրդ ինքն ինչպէս է տնօրինում իր ճակատագիրը: Դա առաւել եւս առանցքային է ժամանակակից աշխարհում, երբ առկայ է նոր աշխարհակարգի ձեւաւորման գոր-

ծընթաց, որտեղ յատկեցում են ներկայացուցիչների եւ մակաբոյժների տեղերն ու դերերը: Հայաստանն ու Արցախը պէտք է դրսեւորեն, թէ ինչին են արժանի՝ նոր աշխարհակարգի ներկայացուցչի առաքելութեանը, թէ մակաբոյժի կարգավիճակին:

Իսկ Օպամային, Օլանդն ու Պուտինը զբօսաշրջիկներ չեն, որ իրենց եւ միջազգային քաղաքականութիւնը մշակեն ճանապարհորդական նոթերի հանրագումարով:

Ներիշխանական նոր դիլեման

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Այն բանից յետոյ, երբ Սերժ Սարգսեանի մամուլի խօսնակը յայտարարեց, որ սահմանադրական բարեփոխումների մասին նրա վերջնական կարծիքը կը հնչի Փետրուար-Մարտ ամիսներին, ոչ իշխանական ուժերը շտապեցին յայտարարել, որ Սերժ Սարգսեանը իրենց ճնշման ներքոյ նահանջել է եւ կարկամել սահմանադրական բարեփոխումների հարցում: Սերժ Սարգսեանի խօսնակի յայտարարութիւնն իսկապէս վկայում է, որ Սարգսեանը, այսպէս ասած, թայմաութ է վերցնում կարեւոր որոշումից առաջ, ինչը, իհարկէ, հիմք է տալիս կարծելու, որ նա վստահ չէ սահմանադրական բարեփոխումները յաջողելու հարցում, եւ ժամանակը նրան պէտք է հասկանալու համար, թէ ինչքանով կարող է առաջ մղել իր մտադրութիւնը: Եւ այստեղ ոչ իշխանական ուժերի դերն իհարկէ կարող է լինել, սակայն առաւել հաւանական է, որ Սերժ Սարգսեանը որոշման համար ժամանակ է շահում ներիշխանական վերադասաւորումների նոր փուլի համար, որում ոչ իշխանական ուժերը առաւելագոյնը կարող են նշանակութիւն ունենալ այնքան, ինչքան որ Ապրիլին կառավարութեան փոփոխութեան ժամանակ էր: Իսկ ներկայիս վերադասաւորումները, այսինքն՝ ապրիլին սկսուած ինչ որ փուլը, արդէն իսկ մեկնարկել է տարածքային կառավարման նախարար եւ փոխվարչապետ Արմէն Գեորգեանի հրաժարականով, թէեւ մեկ-

նարկը, ըստ էութեան, կարելի է համարել Միւնիքի մարզպետի՝ Լիսկայի իսպառուակ վերադարձը: Այսպիսով, հետաքրքրական գիծ է նշմարուած, նոր փուլը մեկնարկել է միեւնոյն՝ տարածքային կառավարման ոլորտում երկու առանցքային փոփոխութիւններով: Այսինքն՝ Սերժ Սարգսեանը ներկայումս կարծեք թէ փորձում է ամրանալ տեղերում, ինչը, իհարկէ, բոլորովին զարմանալի չէ 2013-ի նախագահական ընտրութիւնների արդիւնքները դիտարկելով, երբ Սերժ Սարգսեանը մի շարք մարզային քաղաքներում պարտութիւն էր կրել: Չի բացառուում, որ, օրինակ, Արմէն Գեորգեանի հեռացումը պայմանաւորուած էր հենց դրանով, եւ Սարգսեանը միայն այսօր նպատակահարմար գտաւ հեռացնել նրան:

Այսպէս թէ այնպէս, ակնյայտ է, որ գործ ենք ունենալու ոչ թէ մէկ-երկու առանձին նշանակումների հետ, այլ ներիշխանական մի գործընթացի, որը բերելու է նոր առանցքային փոփոխութիւններ կադրային դասաւորուածութեան առումով: Ըստ էութեան, հեռացել է մէկ մարդ, սակայն թափուր է մնացել երկու պաշտօն՝ ՏԿ նախարարութեան ղեկավարի եւ փոխվարչապետի պաշտօն, ու շատ հաւանական է, որ լուծումը լինի արդէն ոչ թէ մէկ, այլ երկու մարդով: Այսինքն՝ նշանակուի նոր ՏԿ նախարար, սակայն փոխվարչապետը այլեւս լինի մէկ այլ անձ՝ մէկ այլ նախարար: Ըստ որում՝ սակարկումն ուժի մէջ, եթէ նկատի

առնենք այն, որ նա 2008 թուականից ի վեր, ըստ էութեան, նախագահում է առաւելապէս շահերի բախումներ առաջացնելով եւ բազմազանեցնելով այս իրավիճակը:

Այստեղ անխուսափելի է կառավարութիւնում ուժերի բալանսի փոփոխութիւնը, եւ հարցն այն է, թէ ում օգտին է փոխուելու բալանսը՝ Յովիկ Աբրահամեանի, թէ՞ Սերժ Սարգսեանի: Յովիկ Աբրահամեանի պարագայում այստեղ շրջանակն աւելի լայն է, ներառեալ ոչ իշխանական ուժերը, եւ ինչ-որ առումով նաեւ Ռոբերտ Գոչարեանը, եթէ վերջինիս համար Սերժ Սարգսեանն է հիմնական մրցակից եւ ոչ Յովիկ Աբրահամեանը:

Շրջանառուում են փոխվարչապետի յաւակնորդների անուններ, եւ Սերժ Սարգսեանի, եւ Յովիկ Աբրահամեանի վստահելի անձանց շրջանակներից: Եթէ նշանակուած է Յովիկ Աբրահամեանի վստահելի անձ, ապա այստեղ փոխուում է ներիշխանական պայքարի տրամաբանութիւնն ինքնին, եւ ըստ էութեան կը ստացուի, որ Սերժ Սարգսեանը լիովին յանձնում է կառավարութիւնը եւ վերացնում Աբրահամեանին հաւասարակշռող մեխանիզմները, ինչը պայքարի ծանրութիւնը թեքում է արդէն Աբրահամեան-Գոչարեան դաշտ: Սակայն, միւս կողմից, չի բացառուում, որ Սերժ Սարգսեանը գնալ նման քայլի՝ իրեն թիրախից որոշակի ժամանակահատուած հանելու համար, շախմատային լեզուով ասած, գոհ տալով սահմանադրական բարեփոխումները, սակայն ժամանակ շահելով 2017-18-ին աւելի հանգիստ պատրաստուելու համար, մինչեւ իր հիմնական մրցակիցները ուժերը կը կենտրոնացնեն միմեանց թուլացնելու համար: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Երբ Հայաստանն ու Արցախը յաղթում էին պարտադրուած առաջին պատերազմը, դրանից առաջ որեւէ նախագահ Արցախում չէր եղել, բայց բոլորը լաւ ճանաչեցին Արցախն ու Հայաստանը: Յետոյ դրանք անձանաչելիօրէն փոխուեցին իրենց «էլիտաների» յարմարութեան, նիւթապաշտութեան, պետութիւնը անձնական կառուածքի կամ պատերազմական աւարի հետ նոյնականացնելու հմտութեան ու հնարամտութեան հետեւանքով:

Հիմա տեղի է ունենում այդ ամէնը յանձնելու կամ պարզապէս անձնական անվտանգութեան ու բարեկեցութեան առաւել չէզոք պաշարների հետ փոխանակելու գործընթաց, եւ այդ գործընթացը իրականացում է թէ Հայաստանի, թէ Արցախի «էլիտաների» լիակատար լուծութեամբ ու մասնակցութեամբ:

Օպամային, Օլանդն ու Պուտինն այդ ամէնը տեսնելու համար որեւէ հրաւերի անհրաժեշտութիւն չունեն, այդ ամէնն ամէնից լաւ երեւում է հենց նրանց տեղից: Օրինակ, Օպամային եւ Օլանդը իրենց տեղից էլ լաւ տեսնում են Արցախի ճակատագիրը Պուտինին յանձնող նախններն ու այդ նամակների հեղինակների հետ Հայաստանի ու Արցախի ղեկավարների այցերը առաջին գիծ:

Այդ հայաստանեան եւ արցախեան «էլիտաներին» է, որ երեւի թէ հարկ է իրենց գործունէութեան արդիւնքը մի պահ դիտել կողքից: Գուցէ այդ ժամանակ աւելի լաւ տեսնեն, թէ ինչպէս են զբաղուել իրենց երկրների եւ ժողովուրդների ճակատագրով: «ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ՀՆՁՄԱԿԵԱՆ
ԿՈՒՄՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալսմանօրէն չի բաժնետիր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Առաջարկում Է Շանթ Յարութիւնեանին քաղաքացիական պայմանագրով ճանաչել

Հայաստանի Ազգային ժողովում մի շարք պատգամաւորներ անդրադարձան Շանթ Յարութիւնեանին եւ նրա ընկերների գործով դատավճռին՝ այն համարելով անարդար, իսկ ճաղերի ետեւում յայտնուած 12 քաղաքացիներին անուանելով քաղաքացիական պայմանագրով:

Նիկոլ Փաշինեանը խորհրդարանի Մարդու իրաւունքների պաշտպանութեան յանձնաժողովի նախագահին առաջարկեց կազմակերպել լսումներ «Քաղաքական դատավարութիւնները Հայաստանում» թեմայով:

«Որպէսզի մենք հնարաւորութիւն ունենանք հիմնաւորել մեր տեսակէտները, թէ ինչու ենք այդ մարդկանց համարում քաղաքացիական պայմանագրով ճանաչում, որպէսզի մենք կարողանանք անհրաժեշտ դեպքերում իրենց դատաւարութիւնը համարել ճշմարիտ, այդ դիրքորոշումն ունենալ: Հարութիւնեան համար պարզ կը դառնայ, թէ ի վերջ ուր տեսակէտն է առաւել հիմնաւոր», - ասաց Փաշինեանը:

Ընդդիմադիր պատգամաւորի խօսքով՝ այս հարցն այնքան հրատապ է, որ չեն կարող սահմանափակուել յայտարարութիւններ անելով: «ՀՀ քաղաքացիները իրաւունք ունեն իմանալ, թէ ինչու համապատասխան միջոցներ չեն ձեռնարկուում, որպէսզի այդ մարդիկ անյապաղ յայտնուեն անազատութեան մէջ: Մանաւանդ, մենք գիտենք, այսօր Հայաստանում կան մարդիկ, որոնք մարդասպանութիւն են գործել եւ ոչ միայն բանտում չեն գտնուում, այլեւ իշխանութեան ամենավերին օղակների կողմից ստանում են բարձրագոյն պաշտօններ», - ասաց Փաշինեանը:

Յանձնաժողովի նախագահ Էլինար Վարդանեանը ընդունեց նրա առաջարկը, բայց անդրադառնալով քաղաքացիական իրաւունքների հարցին՝ նշեց, թէ Հայաստանում որեւէ մէկին որպէս քաղաքական բանտարկեալ դիտելու փորձ երբեք չի եղել, այլ տուեալ մարդուն վերադրուում է քրէական օրէնսգրքով նախատեսուած յղուած: Փաշինեանը հակադարձեց, որ խորհրդային ժամանակներում էլ քաղաքական յանցագործութիւնների օրէնսգրքը գոյութիւն չուներ, իսկ քաղաքական բանտարկեալներ կային:

տարկեալներ կային:

«Խոլոր երկրներում էլ քաղաքական բանտարկեալները քրէական յղուածներով են դատաւարուում», - ընդգծեց նա:

Շանթ Յարութիւնեանին ու ազատագրուած նրա 11 ընկերների գործով դատավճռին փորձեց անդրադառնալ նաեւ պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը. նախ ասաց, որ դատավճռից դատելով Հայաստանում նորից կան քաղաքացիական պայմանագրով ճանաչումներ, ապա յիշեցրեց նախագահ Սերժ Սարգսեանի մասնակցութեամբ հարց ու պատասխանը ԱՄՆ-ի կողմից իրականացրած, որտեղ նախագահն ասել է, որ Շանթ Յարութիւնեանը յանցանք է գործել: Այդ պահին Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը կարգադրեց անջատել պատգամաւորի խօսափողը:

Յաջորդ անգամ ձայնի իրաւունք ստանալով Փոստանջեանը հետաքրքրուց, թէ ինչու են խոչընդոտում իր աշխատանքը: Գալուստ Սահակեանն արձագանքեց, թէ օրակարգում նման հարց չունեն: Ազգային ժողովի նախագահը թեմային, այնուամենայնիւ, անդրադարձաւ արդէն խորհրդարանի միջանցքում՝ կտրուկ դէմ արտայայտուելով Յարութիւնեանին ու նրա ընկերներին քաղաքացիական պայմանագրով ճանաչելու:

«Մեզանում երբեք չի քաղաքացիական պայմանագրով ճանաչում եղել, որովհետեւ դա եկել է Սովետական Միութիւնից, իսկ իմ քաղաքական ըմբռումների վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել նոյն քաղաքացիական պայմանագրով ճանաչումները», - ասաց Սահակեանը:

Շանթ Յարութիւնեանին քաղաքացիական պայմանագրով վերաբերեալ յայտարարութիւններ են տարածել նաեւ Աժ ընդդիմադիր «Ժառանգութիւն» եւ Հայ ազգային գոնկրէս իմբակցութիւնները: «Ժառանգութիւնը» նշել է, որ հասարակութեան մի պատկառելի հատուած այս դատավարութիւնից ակնկալում էր ամբաստանեալների արդարացի մահի, սակայն դատավարութիւնը դեռ չաւարտուած կողմից իր համալսարան Սերժ Սարգսեանին իր ելույթում կոպտօրէն խախտեց անմեղութեան կանխաւարկածը եւ ներկայացրեց մեղադրանք-վերջնազրկում:

«Պէտք է Անցնել Հարիւր Տոկոսանոց Համաձայնական Ընտրակարգի». ՀՀԿ

Հանրապետական կուսակցութեան անդամ Ռաֆիկ Պետրոսեանը համոզուած է, որ Հայաստանում պէտք է վերացուի մեծամասնական ընտրակարգը:

«Մեծամասնական ընտրակարգի հարցը միշտ էլ քննարկուել է: Ինքս կարծում եմ, որ հիմա ամենաճիշդ ժամանակն է, որ անցնենք հարիւր տոկոսանոց համամասնական ընտրակարգի: Կուսակցութիւններն արդէն կայացել են, մեծամասնական ընտրութիւններին կատարուում են տարբեր խախտումներ, լցոնումներ: Հետեւաբար, պէտք է անցում կատարել», - այսօր՝ հոկտեմբերի 20-ին, լրագրողների հետ զրոյցում ասաց Ռաֆիկ Պետրոսեանը:

Նրա խօսքով՝ Սահմանադրական բարեփոխումների նոր հայեցակարգով հնարաւորութիւն կը ստանան նաեւ դատաւարութեան ընտրութիւնները, որոնց թոյլ կտան մասնակցել ընտրութիւններին:

«Նրանք, որոնք ծանր յանցագործութիւն չեն կատարել եւ դատաւարուել են մինչեւ տասը տարուայ ազատագրկման, ապա կ'մասնակցեն ընտրութիւններին», - ակելացրեց ՀՀԿ-ական անդամը:

Նշենք, որ հոկտեմբերի 15-ին սահմանադրական բարեփոխումների հարցով փորձագիտական յանձնաժողովը Հայաստանի նախագահին էր ներկայացրել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը:

Ալեք Ենիգոմշեանի Համախոհներն ու ընկերները դժգոհ են ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի որոշումից՝ ծառայողական քննութեամբ պարզել կիրակի օրուայ միջադէպի հանգամանքները:

Ալեք Ենիգոմշեանի համախոհներն ու ընկերները դժգոհ են ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի որոշումից՝ ծառայողական քննութեամբ պարզել կիրակի օրուայ միջադէպի հանգամանքները:

Իրաւապաշտպանները պնդում են, որ կոյր մարդուն փողոցի երթեւեկելի մասում անօգնական թողնելը քրէական յանցագործութիւն է:

Ազատամարտիկ Գագիկ Սարուխանեանը համոզուած է՝ բոլոր յատկանիշները կան քրէական գործ յարուցելու համար, մինչդեռ ոստիկանապետը, ծառայողական քննութիւն նշանակելով, ուզում է կոծկել աշխատակիցների յանցանքը:

«Դա ուղղակի աչքակապութիւն է, որպէսզի ինչ-որ կերպ քննեն գործը: Երբ որ ոստիկանները հրահրում են, տղաներից 1-2-ը կարող է նաեւ պատասխանեն հարուածներին, այդ տղաները վեց տարի դատուում են: Ալեք հետեղած տղան կարող էր քաշքշուկի ժամանակ մի հատ էլ ինքը քաշեր, էդ ոստիկանը ընկնէր, վեց տարի պիտի նստեր: Յանկացած այլ միտք արտայայտողին սսկում են տեւորով: Այսինքն՝ ոստիկանին չկայնես, ոստիկանը ինչ ուզի, քո գլխին կարող է անի», - ասաց Սարուխանեանը:

ԱՍԱԼԱ-ի նախկին անդամ, լիբանանահայ Ենիգոմշեանը նախօրէին «Ազատութեան» հետ զրոյցում «քաղաքական ուղերձ» էր

որակել այս միջադէպը՝ համոզմունք չայտնելով, որ իրեն տուեալ տանող վարորդին բերման ենթակելին ու իրեն անօգնական թողնելը նախապէս ծրագրուած սադրանք էր:

Նախախորհրդարանի անդամ Վարդան Յակոբեանի գնահատմամբ՝ ոստիկաններն անմարդկային են գործել, միջադէպը ցոյց տուեց՝ նոր որակի ոստիկանութեան մասին Վլադիմիր Գասպարեանի խօսքերը օդում են մնացել:

«Փողոցում թողնել ու գնալ անպաշտպան մարդուն... այդպիսի ոստիկանները իրաւունք չունեն աշխատելու այս համակարգում: Այս ոստիկանները համակարգի տիպիկ դրսեւորումն են: Գասպարեան Վովայի աշխատանքը կարելի է գնահատել հենց նրանց վարուելակերպով», - ասաց Յակոբեանը:

«Ընդդէմ անմարդկային ոստիկանութեան» կարգախօսի ներքոյ Ենիգոմշեանի համախոհների եւ ընկերների երթը մեկնարկեց Ազատութեան հրապարակից դէպի Ոստիկանութիւն եւ Գլխաւոր դատախազութիւն:

Ոստիկանութեան շէնքի առջեւ Վլադիմիր Գասպարեանի խօսնակ Աշոտ Ահարոնեանը ցուցարարներին խոստացաւ, թէ ամենաուշը երեք օրից յայտնի կը դառնան ծառայողական քննութեան արդիւնքները, ուսումնասիրուում են նաեւ փողոցում տեղադրուած տեսախցիկների նկարահանումները:

Քաղաքագետ. «Ժառանգութիւնը» կարող է Լքել Խորհրդարանական Եռեակը

Հայաստանի ներքաղաքական ընդդիմադիր դաշտում վիճակն այնպիսին է, որ չի բացաւուում, որ խորհրդարանական եռեակում (ԲՀԿ, ՀԱԿ, «Ժառանգութիւն») մնան երկու կուսակցութիւններ: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշել է քաղաքագետ Սերգէյ Մինասեանը:

«Մենք բախուում ենք մի իրավիճակի, երբ ներքաղաքական դաշտում տեղի կ'ունենան անորոշ գործընթացներ», - ասել է քաղաքագետը: Այդուհանդերձ, նա ոչ մի լուրջ գործընթաց չի կանխատեսում, նշելով, որ ինդիքը ոչ միայն երեք ուժերի ներուժի մէջ է, այլեւ արտաքին քաղաքական հարցերում նրանց դիրքորոշումների:

Մինասեանը չի բացաւուում, որ «Ժառանգութիւնը» դուրս գայ եռեակից, կամ աւելի արմատական դիրքորոշում որդեգրի: Նրա կարծիքով, լաւագոյն դէպքում կարելի կը լինի խօսել այն մասին, որ ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը կը շարունակեն համագործակցութիւնը, իսկ վատագոյն դէպքում կը լինի քաղաքական ուժերի նոր դասաւորութիւն:

Հարցին, թէ հնարաւոր է, որ եռեակի պառակտման պատճառ դառնայ նախագահի միասնական թեկնածու ունենալու ցանկութեան բացակայութիւնը, քանի որ այդ ուժերից իւրաքանչիւր ունի իր թեկնածուն, Մինասեանը նշել է, որ անձերի մասին խօսելը դեռ վաղ է: «Եռեակի մաս կազմող ուժերի պառակտումը ոչ միայն գաղափարական է, այլեւ կառուցուած քայլին: «Ժառանգութիւնում» կատարված քայլերն արդեն քաղաքական իւրաքանչիւր ուժի համար անհրաժեշտ են, իսկ ԲՀԿ-ում լրիւ այլ իշխանութեան ուղղահայեաց



Քաղաքագետ Սերգէյ Մինասեանը

է», - ընդգծել է Մինասեանը: Միաժամանակ, քաղաքագետ տուեալ պահին բացաւուել է իշխող ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ կոալիցիայի ձեւաւորման հնարաւորութիւնը, քանի որ ցանկութեան դէպքում «ԲՀԿ» կաներ դա առաւել շահաւէտ պայմանների դէպքում՝ 2012թ.-ի խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքների հիման վրայ:

Յիշեցնենք, որ «Ժառանգութիւն» կուսակցութեան խորհրդարանական իմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը յայտարարել էր, Հայաստանի խորհրդարանական ուժերի եռեակում չեն քննարկում նախագահի միասնական թեկնածուի հարցը. «Սա չի նշանակում, որ ուժերից իւրաքանչիւրը կարող է յառաջիկայ նախագահական ընտրութիւններում իր թեկնածուին առաջադրել: Բնականաբար, մենք նոյնպէս մեր թեկնածուն ունենք: Հարցն այժմ չենք քննարկում, իսկ տուեալ թեմայի վերաբերեալ յայտարարութիւններ անում են նրանք, որոնք ցանկանում են ինչ-որ ինտրիգ հաղորդել մեր համագործակցութեանը»:

ԼՈՒՐԵՐ

Հայկական Եւ Թուրքական ՀԿ-ները Երկու Կետից Կազմուած Հոշակագիր Եւ Ընդունել

Հայոց ցեղասպանութեան հարցը չկայ մարդու իրաւունքներէ հարցերով զբաղուող միջազգային կազմակերպութիւններէ օրակարգում: Այդ հարցը կը դիտուի որպէս քաղաքական խնդիր: Այս մասին Հոկտեմբերի 21-ին ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիայի «2015թ. յետոյ զարգացման օրակարգի» նախագիծը ներկայացնելիս յայտարարել է «Քաղաքացիական հասարակութեան ինստիտուտ» ՀԿ-ի նախագահ Արտակ Կիրակոսեանը:

Ըստ նրա՝ շատ քիչ բան է արուում հակամարտութիւններէ կանխարգելման ոլորտում:

Նա նաեւ յաւելել է, որ իրենց կազմակերպութիւնը հասել է նրան, որ թուրքական իրաւապաշտպանական ՀԿ-ի հետ երկու կէտից բաղկացած հոշակագիր է ընդունուել:

1-ին՝ ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը, 2-րդ՝ առանց նախապայմաններէ բացել հայ-թուրքական սահմանը:

Ինստիտուտի գործունէութեան մյուս ուղղութիւնը, շարունակել է Արտակ Կիրակոսեանը, այն է, որ ուշադրութիւն դարձուի միջազգային քրէական դատարանին:

Եւս մէկ կարեւոր խնդիր է այսօրուայ պայմաններում ներքաղաքական երկխօսութեան ստեղծումը, երբ Հայաստանում չկայ երկխօսութեան մեխանիզմ եւ իշխանութիւններէ հետ երկխօսութեան միակ միջոցը փողոցները փակելն է», - նշել է Արտակ Կիրակոսեանը:

Միւս ուղղութեամբ ինչպէ՞ս հարբեջանական յարաբերութիւններն են, մասնաւորապէս՝ իսրայէլի քաղաքականութեան հանդէպ բռնութիւնները:

Քրդական Կուսակցութիւնը Թուրքիայից Պահանջել Է Ընդունել Հայոց Ցեղասպանութեան Մէջ Իր Մեղքը

Թուրքաբնակ քրդերի «Ժողովուրդների դեմոկրատական գոնկրէս» (HDK) կազմակերպութիւնն իր կողմից տարածուած շրջաբերականում նշել է, որ Թուրքիան պէտք է ընդունի 1915 թուականին Հայոց ցեղասպանութեան մէջ իր մեղքը:

Ինչպէս հաղորդում է «Արմենայրես»-ը՝ վկայակոչելով թուրքական ԶԼՄ-ները, HDK-ի կողմից կազմակերպուած «Խաղաղութեան եւ Ժողովրդավարութեան կոնֆերանսի» արդիւնաբար փաստաթղթում ասուում է. «Միւրիայում քրդերի հանդէպ Թուրքիայի վարած քաղաքականութիւնը, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի արած յայտարարութիւնները տարածաշրջանում իսրայէլական սպառնացող վտանգներ են:

Պետք է վերջ տրուի Թուրքիայում այլեւիների ճնշումներին եւ նրանց ձուլման քաղաքականութեանը: Հայերի եւ սուրիների դէմ 1915 թուականին իրականացուած ցեղասպանութեան մէջ Թուրքիան պէտք է ընդունի իր մեղքը»:

Պետք է վերջ տրուի Թուրքիայում այլեւիների ճնշումներին եւ նրանց ձուլման քաղաքականութեանը: Հայերի եւ սուրիների դէմ 1915 թուականին իրականացուած ցեղասպանութեան մէջ Թուրքիան պէտք է ընդունի իր մեղքը»:

ՀՀ Պատգամաւոր. «Հայաստանում Մարդու Իրաւունքների Հետ Կապուած Պատկերն Այնքան Էլ Մռայլ Չէ»

Հայաստանում մարդու իրաւունքների հետ կապուած պատկերն այնքան էլ մռայլ չէ, ինչպէս այն ներկայացնում են քաղաքական որոշ կուսակցութիւններ: Այս մասին հոկտեմբերի 20-ին խորհրդարանում յայտարարել է ՀՀԿ-ական պատգամաւոր, ԱԺ պետաիրաւական հարցերով յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Սահակեանը:

Ըստ նրա՝ ինքը հարցում է ուղարկել Հայաստանի քննչական կոմիտէ՝ պարզելու, թէ քննուում են արդեօք ձեռքարկուածներէ

հանդէպ դատաւարութեան հետ կապուած քրէական գործերը: «Ինձ պատասխանել են, որ 2013 թ. ընթացքում յարուցուել է 19 այդպիսի քրէական գործ», - յայտնել է Սահակեանը: Նա յաւելել է, որ, հետեւաբար, չպէտք է իրավիճակն ակելի վատ ներկայացնել, քան այն կա: «Եթէ մենք խօսում ենք խորհրդարանում բարոյահոգեբանական լաւ մթնոլորտի մասին, ապա ինքներս պէտք է այն պահպանենք: Դա բխում է մեր համատեղ աշխատանքի շահերից», - նշել է Յովհաննէս Սահակեանը:

«Մենք Ընտրել Ենք Առաւել Արդիւնաւէտ Պետական Կառավարման Դժուարին, Բայց Միակ Գանապարհը». Սերժ Սարգսեան

Նախագահ Սերժ Սարգսեան ներկայ է գտնուել Հայաստանի Հանրապետութեան յատուկ քննչական ծառայութեանը (ՀՔԾ) յատկացուած նոր մասնաշէնքի բացմանը:

Նշելով, որ Յատուկ քննչական ծառայութիւնն իր ստեղծման առաջին օրից եղել է մեր երկրի իրաւագահ համակարգի կարեւոր բաղադրիչը, Հանրապետութեան Նախագահը գոհունակութեամբ է փաստել, որ կարճ ժամանակահատուածում այն կարողացել է ձեռք բերել իր առաքելութեանը համարժէք հեղինակութիւն:

Իր ելույթում նախագահը նաեւ ասլ է.

«Մենք այլընտրանք չունենք: Մենք ընտրել ենք առաւել արդիւնաւէտ պետական կառավարման եւ պետութիւն-հասարակութիւն ներդաշնակ վերընթացի ապահովման դժուարին, բայց միակ ճանապարհը: Եւ այս ճանապարհը, անշուշտ, ունի շատ նրբութիւններ: Բայց միեւնոյն ժամանակ, այս ճանապարհն ունի նաեւ հիմնարար կանոններ, որոնք մենք պարտաւոր ենք ապահովել: Առաջին հերթին մենք մշտապէս, ամէն օր մեր քայլերով ուղեւորուում ենք յղելու այն մասին, որ Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացու՝ բարձրաստիճան պաշտօնեայի, թէ դեռ որեւէ յարմար աշխատանք չգտած եւ այդպիսին փնտրող քաղաքացու իրաւունքները պաշտպանուած են հաւասարապէս լիարժէք, բայց օրէնքի առջեւ պատասխանատու են նոյնպէս հաւասարապէս եւ լիարժէք: Մենք

շատ ուրախ կը լինենք եւ թեթեւացած հոգով կարճանագրենք, որ անցել ենք մեր իսկ կողմից նախանշուած այս ճանապարհը միայն այն ժամանակ, երբ տեսնենք, որ մեր հասարակութեան մէջ արդէն տիրապետող է համոզմունքը, որ անկախ բաղադրեցած պաշտօնից, դիրքից՝ օրէնքի առջեւ հաւասար են եւ պատասխանատու բոլորը: Մենք այս հանգրուանին ենք ձգտում, եւ, կարծում եմ, ձեզնից իւրաքանչիւր շատ լաւ հասկանում է, թէ որքան մեծ դեր ունի ինքը այս բարդ, բայց պատուաբեր գործընթացում», - ասել է Նախագահ Սերժ Սարգսեանը:

Դիմելով Յատուկ քննչական ծառայութեան անձնակազմին՝ Նախագահն ընդգծել է, որ ծառայութեան գործունէութեան վերաբերեալ օրէնքով նախատեսուած տարեկան գրաւոր հաղորդումների ուսումնասիրութիւնները, հրապարակային եւ թափանցիկ գործելաճոճը յատուկ ցոյց են տալիս ծառայութեան հետեւողական առաջընթացն ու զարգացումը:

«Առանձնակի կարեւորում է ձեր դերակատարումը խոշտանգումների դէմ պայքարում: Չնայած վերջին տարիներին մեզ համար բացարձակապէս անընդունելի այս երեւոյթի կանխման ուղղութեամբ արձանագրուած դրական արդիւնքներին, ձեր մասնագիտական կառուցի խնդիրն է շարունակել համաչափ արձագանքել նման դէպքերին եւ ապահովել դրանց արդարացի ու արդիւնաւէտ քննութիւնը», - նշել է Հանրապետութեան Նախագահը:

ԱԺ-ն մօտ Ժամանակներս կը վաւերացնի ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութեան պայմանագիրը

ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութեան մասին պայմանագիրը չի ներկայացուել ԱԺ ընթացիկ քառօրեայ նիստերի ժամանակ:

ԱԺ-ի աղբիւրները փոխանցում են Պայմանագիրը պէտք է խորհրդարանին փոխանցուի ՀՀ նախագահի աշխատակազմից, սակայն, ըստ ամենայնի, ընթացիկ քառօրեայ նիստերի ժամանակ դատելի չի ունենայ:

Չի բացառուում, որ ԱԺ-ի կողմից այդ պայմանագրի վաւերացումը կը ծրարուի:

րացման համար ԱԺ արտահերթ նիստ հրահրուի: Հակառակ դէպքում՝ Պայմանագիրը խորհրդարանի վաւերացմանը կը ներկայացուի չափորդ քառօրեայ նիստերի ժամանակ՝ նոյեմբերի 10-13-ին:

Յիշեցնենք, որ Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելու մասին պայմանագիրը ստորագրուել է հոկտեմբերի 10-ին, Մինսկում կայացած Բարձրագոյն եւրասիական տնտեսական խորհրդի նիստում:

Ֆրանսայի Դեսպանի Կարծիքով

Շարունակուած էջ 1-էն

Դեսպանը ակնյցուց, որ փարիզեան գազաթնաժողովը նաեւ կը վերահաստատէ շատ կարեւոր հանգամանք մը եւս. «բանակցային տարբերակէն բացի դարաբաղեան հակամարտութիւնը այլ լուծում չունի» եւ որ «հիմքը ըլլալու են մատրիտեան երեք կարեւոր սկզբունքները՝ տարածքային ամբողջականութիւն, ժողովուրդներու ինքնորոշման իրաւունք եւ ուժի կիրառման կամ կիրառման սպառնալիքի բացառում»:

Ֆրանսայի դեսպանը նախ խօսեցաւ Եւրամիութիւն-Հայաստան յարաբերութիւններու մասին, յայտնելով որ Հայաստանի հետ յարաբերութիւններու անդրադարձ պիտի ըլլայ Եւրամիութեան նոր յանձնարարութեան տեսքով»:

Իրանի Նախագահը Հրահրուած Է

Շարունակուած էջ 1-էն

Իրանի նախագահը ողջունած է հայ համայնքի դերակատարութիւնը: Անդրադարձ կատարուած է դարաբաղեան հակամարտութեան եւ լուծումի յանգելու անհրաժեշտութեան:

Աբրահամեան նախապէս տե-

սակցած էր նաեւ իրանի արտաքին գործոց նախարար Մոհամմէս Ժաուատ Զարիֆի հետ:

Տեսակցութեան ընթացքին քննարկուած են տարածաշրջանային խնդիրները եւ երկկողմանի համագործակցութեան վերաբերող հարցերը: Կողմերը շեշտեցան են շրջանի կայունութեան կարեւորութիւնը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506

ՔԻՐՈՍԵՐՈՒՆ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒ ՕԴԱՅԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Քիւրոս գինւորական պատասխանատու մը յայտարարեց, որ մեծաքանակ զէնք ու զինամթերք հասած են Սուրիոյ հիւսիսային Այն Արապ կամ Քոպանի շրջանին մէջ կռուող քիւրոս զինեալներուն: Քիւրոսները սակայն զգուշացուցին, որ զէնքերու տեսակն ու քանակը տակաւին բաւարար չէ վճռելու ճակատամարտին ճակատագիրը՝ ի նպաստ քրտական կողմին: Իսկ քրտական ինքնապաշտպանութեան ուժերու ղեկավար Օճայան իսօ կոչ ուղղեց զէնք ու զինամթերք փոխադրելու համար ապահով անցքեր բանալու դէպի Քոպանի, ամրապնդելու համար քրտական պաշտպանութիւնները: Իսոյի համաձայն, Սուրիոյ ընդդիմադիր ազատ բանակը կը կռուի ՏԱՀԷՇ-ի դէմ՝ քիւրոսներուն կողքին: Զինուորական ղեկավարը դիտել տուաւ, որ ծայրայեղական զինեալները իրենց գլխաւոր թիրախը կը համարեն Քոպանին, ուստի գանազան շրջաններէ մարդու եւ ծանր արքեր բերած են, ներխուժելու համար սահմանային այդ աւանը:



Նախապէս, ամերիկեան զինուորական ղեկավարութիւնը նշած էր, որ ռազմական օդանաւեր զէնք ու զինամթերք նետած են Քոպանիի մէջ Իսլամական Պետութիւն կազմակերպութեան յարձակումները դիմակալող քիւրոսները: Ամերիկեան կողմին համաձայն, օդային օգնութիւններու փոխանցումը կը նպատակադրէ կանխարգիլել աւանին վրայ ծայրայեղական զինեալներու տիրապետութեան հաստատումը: Պետական քարտուղար ձոն Քէրի սակայն յատակացուց, որ քիւրոսներուն զինուորական օգնութիւններ տրամադրելու որոշումը հանգրուանային քայլ մըն էր եւ չի նշանակեր կացութեան հանդէպ ամերիկեան դիրքորոշումին փոփոխութիւնը: Թուրքիոյ արտաքին գործոց նախարար

Մէլլուտ Չաւուշօղլու իր կարգին յայտարարեց, որ Թուրքիա կը դիւրացնէ իրաքի քիւրոսներուն Քոպանի փոխադրութիւնը՝ թրքական հողերուն վրայով: Նախարարը վերահաստատեց, որ Անգարա պիտի չթոյլատրէ Քոպանիի անկումը:

Ամերիկացի պատասխանատու մը մինչ այդ յայտարարեց, որ միջազգային յարձակումներուն հետեւանքով ՏԱՀԷՇ ստիպողաբար սկսած է փոխել իր զինուորական մարտավարութիւնը: Քրտական ուժերու նոր յարձակումներուն գուզահետ, միջազգային դաշնակից ուժեր օդային եւ հրթիռային նոր յարձակումներ գործեցին Իսլամական Պետութիւն կազմակերպութեան դիրքերուն վրայ, Սուրիոյ սահմանային Այն Արապ կամ Քոպանի աւանին մօտ: Ռմբակոծումները մասնաւորաբար թիրախ ընտրեցին Այն Արապի արեւելեան շրջանները, ուր քաշուած են ՏԱՀԷՇ-ի զինեալները:

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողան յայտարարեց, որ Սուրիոյ Այն Արապ գաւառը արդէն դատարկուած է իր քաղաքային բնակչութենէն: Անոր խօսքով, մօտ 200 հազար քիւրոս գաղթականներ ապաստանած են Թուրքիա, փախուստ տալով Քոպանիի մէջ ընթացող արիւնալի մարտերէն: Իսկ արտաքին գործոց նախարար Մելլուտ Չաւուշօղլու յայտարարեց, որ թրքական հողերուն վրայով Փեշմերգայի զինեալներուն Քոպանի փոխադրութեան մասին բանակցութիւնները տակաւին կը շարունակուին:

ՓԱՐԱՄԱԶԻ ԱԶԱՏԱՏԵՆՉ ՀՈԳԻՆ ԿՐ ՍԱԽԱՌՆԻ ՔՈՊԱՆԻՒՎՐԱՅ

ՍԱՄՈՒՅԼ ՂԱԶԱՐԵԱՆ

Վերնագիրը կը թուի տարօրինակ, անկապ, անիմաստ նախադասութիւն մը, ինչ առնչութիւն կրնայ ունենալ հարիւր տարի առաջ Պոլսոյ Պայագիտ հրապարակին վրայ նահատակուած Հնչակեան Փարամազը, այս օրերուն Քոպանիի մէջ տարուող կռիւններուն հետ:

Պատասխանը: Երկուշաբթի էր, ինչպէս միշտ կը հետեւէի Քոպանիի շուրջ տեղի ունեցած մարտական գործողութիւններու զարգացումներուն: Յանկարծ հետեւեալ լուրը փշաքաղեց մարմինս, «Ընկ. Փարամազը ուժ տուաւ Քոպանիի դիմադրութեան» վերնագրին տակ դրուած էր լայն ժպիտով երիտասարդի մը պատկերը: Մեծ հետաքրքրութեամբ սկսայ կարդալ քիւրոս ժողովուրդի Պաշտպանութեան Զոկաստներու (YPG) մամուլի գրասենեակի կայքէջի տուած պաշտօնական լուրը, ուր կ'ըսուէր. «Մեր ժողովուրդներուն ազատ ապագայ մը հիմնելու համար, Քոպանիի մէջ տարուող պայքարին ուստուած ընկ. Փարամազ-Քրզըլպաշ, ժողովուրդներու թշնամի, ՏԱՀԷՇ-ի վայրագ աւազակախումբերու դէմ պայքարի ժամանակ անմահացած է: Քոպանիի պաշարման առաջին օրերէն, յեղափոխականին յարիւր աննկուն կեցուածք ցուցաբերած է ընկ. Փարամազը: Մեծ յարգանքով պիտի վառ պահենք Անոր յիշատակը: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք առաջին հերթին իր ընտանիքի անդամներուն, պայքարի ընկերներուն եւ մեր բոլոր ժողովուրդներուն»:



է իր արժանի գնահատականը տալ Մատթէոս Սարգիսեան նահատակ յեղափոխականին: Յիրաւի յեղափոխութիւնը տարածքի եւ ժամանակի սահմաններ չի ճանչնար, յեղափոխութիւնը անընդհատ շարունակուող պատմական գործընթաց մըն է: Ամէն տեղ ուր կան այդպիսի մարդիկ, որոնք յաղթահարած են իրենց ապրած ներկան եւ կը ձգտին աւելի յառաջադէմ մարդկային արդար եւ ազատ կեանքի:

Յեղափոխականները կը շարունակեն կռիւր քանի դեռ կայ դասակարգային անարդարութիւն, կը մղուին ազգային ազատագրական պայքարներ, Արցախէն մինչեւ Քոպանի, Պասք եւ Պաղեստին: Յեղափոխականներու կռիւր կը շարունակուի մթազնած ուղեղներ ունեցող մարդու արտաքին կերպարանքով զազաններու դէմ, որոնք ամէն տեղ յանուն Աստուծոյ կը բռնաբարեն, կը գլխատեն, մշակութային արժէքներ կ'ոչնչացնեն, երկիրներ կը կործանեն, անասնային աշխարհի մէջ չի տեսնուած ոճիրներ կը գործեն:

Յաղթանակը կը մօտենայ, երբ տարբեր ազգութիւններէ երիտասարդ յառաջամարտիկներ իրենց կեանքը կը նուիրեն հայրենիքի, պատիւի, պայծառ ապագայի մը տեսիլքով սոգորուած, նուիրական գաղափար մը իրականացնելու զոհասեղանին վրայ:

Այնտեղ կը ծլին, արմատ կը նետեն վանիկներու, Փարամազներու, Մարօներու երազած գեղեցիկ աշխարհի ծաղիկները: Ի պատիւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կ'արձանագրենք, որ իր ազգին եւ մարդկութեան նուիրեալը ըլլալու կոչումը ունի, 127-ամեայ փորձ ունեցող, միշտ նորովի երիտասարդ, առաջին յեղափոխականը: Յիրաւի Փարամազները անմահ են:

9 ԴԵԿՏԵՄԲԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿՐՆԱՅ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԻԼ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ՝ ԲՈԼՈՐ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶՈՅԵՐՈՒՆ

Հայաստանի Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակ ցուցեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեան Հայաստանի կառավարութեան ներկայացուցած է «Օսմանեան կայսրութիւնում պոնտոսալիները, ասորիները, եգիպտացիները եւ այլ ազգերի ցեղասպանութեան դատապարտման մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան տօները եւ յիշատակի օրերը մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքին մէջ լրացում կատարելու մասին օրէնքներու նախագիծերու թղթածրարը:

Այս հարցը ընդգրկուած է կառավարութեան 23 Հոկտեմբերի օրակարգին վրայ: «Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը նպատակադրած արձանագրութեան ներկայացուած առաջարկութեան փոխարէն Դեկտեմբերի 9-ը յայտարարել բոլոր Յեղասպանութիւնները գոհերի

յիշատակման օր՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ «Յեղասպանութեան յանցագործութեան կանխման եւ պատժման» կոնվենցիան ՄԱԿը ընդունել է 1948 թուականի Դեկտեմբերի 9-ին:

Ելնելով շարադրուած ից, Հայաստանի կառավարութիւնը ներկայացուցած օրէնսդրական նախաձեռնութիւնն ընդունելի կը համարի իր կողմից ներկայացուած առաջարկութեան ընդունման դէպքում», նշուած է թղթածրարին վերաբերեալ գործադիր եզրակացութեան մէջ:

Ներկայացուած օրէնքներու նախագիծերու թղթածրարը Հայաստանի Ազգային ժողովին մէջ քննարկելու ատեն յարակից գեկուցմամբ հանդէս պիտի գայ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՎԵՈՒԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՓԱ՛ՌՔ ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ԱՐԱՐԱՏ»

Պատմական Հայաստանի թէ Կիլիկիոյ ինքնապաշտպանական հերոսամարտերու շարքին, Հաճնոյ իննամսեայ մաքառումը ինքնատիպ դրուագ մըն է հայոց պատմութեան էջերուն քանդակուած:

Կիլիկիոյ Տաւրոսեան լեռներուն թաւած խրոխտ Հաճընը օրինակելի խիզախութեամբ եւ աննկարագրելի վճռականութեամբ ծառայեալ այն ոստիկին դէմ, որ կ'ենթադրէր՝ թէ հեշտութեամբ կարելի է խլել այլոց ազատութիւնն ու դարաւոր բնօրրանը:

Ոչ ոք թող չկարծէ, թէ հայ տարրը երկչոտի եւ վախուորածի խուճապային փախուստով լքեց իր բնաշխարհն ու պապենական օճախը: Եթէ եղան այդպիսիներ, ապա պատմութիւնը ամօթի խարանը վաղո՛ւց դաջած է նմաններու ճակատին: Միւս կողմէ, շատ մը վայրերու մէջ, անհաւասար կռիւներու շարան մըն է որ արձանագրուեցաւ, հրոսակային բախումներ եւ անօրինակ խիզախութեան պատահեցան, մարտիկներու եւ հերոսութեան պայծառ անուններ գրուեցան:

Մեծ Եղեռնէն մազապուրծ հայ զանգուածները վերադառնալով կիլիկեան ոստաններ, ապախնելով ֆրանսական իշխանութեանց խոստումներուն, կազմաւորելով կամաւորական զինեալ ուժեր, սկսած էին հաստատուիլ ու վերաշինել իրենց տունները՝ անկախ Կիլիկիա մը ունենալու վարդազոյն երազներով: Համարեա իրակա- նութիւն կը թուէր ըլլալ Կիլիկիոյ հայկական պետութեան վերստեղծումը. քաղաքական, ռազմական, ժողովրդագրական, տնտեսական ու բարոյական տուեալները լիուրի կը բաւարարէին նման երազի մը իրականացման: Խանդավառ էինք ու մեր կուրծքերը ուռած. պատրաստակամ վերակերտելու Կիլիկիան՝ որպէս պետական միաւոր՝ Առաջին Աշխարհամարտէն ետք գոյատուած:

1920-ին, այս ոգեւորիչ եւ բերկրալից օրերը ի չիք դարձան միջազգային նենգ դիւանագիտութեան զարշահոտ դահլիճներուն մէջ: Հիմնականը ֆրանսական դրուժան քաղաքականութիւնն էր, որ դարպասելով նորաստեղծ քեմալական թուրքիան, ինչ ցինիկ ու էժան զինով վաճառեց հայոց զոհաբերութեան ոգին, անհամար քաջերու եւ նահատակներու բոսոր արիւնն ու իր իսկ

լորձնաշուրթն խոստումները: Կիլիկիոյ հայութեան արդար ակնկալութիւնները եւ անմնացորդ ծառայութիւնները մեծնայն սառնասրտութեամբ դրուեցան կշիռքի նժարին՝ երբ աւելի հրապուրիչ եւ գայթակղիչ կշռեց թրքական եաթաղանին արնթաթախ հոտն ու արժէքը:

Արծուեբոյն Հաճըն ինն ամիս մաքառեցաւ դիւցազնական ոգիով: Ափ մը քաջեր չյուսահատեցան մինչեւ քրեան վերջին կաթիլ. անոնք կառչած մնացին հողին ու հայրենի ծերպին: Եթէ ոմանք մագապուրծ շարունակեցին պայքարիլ Հաճընէն դուրս՝ Հաճընին կարօտով, ապա ուրիշներ՝ զէն ի ձեռին ինկան մոխրակոյտերու վերածուած Հաճնոյ փողոցներուն, խրամատներուն եւ գոհիներուն մէջ: Հաճընցին խաբեպատիր Ֆրանսայէն օգնութիւն սպասեց, մեծ աւետիսով օգնանաւր որոնեց, սակայն այդ օգնանաւր ծառայեց արնախում թշնամիին, որ օղակելով Հաճընը կը փորձէր ընկճել զայն յախտենապէս:

Ինն ամիս հերոսական մարտնչումէ ետք Հաճըն ինկաւ. ճակատագրուած էր կորուստը անոր. 15 Հոկտեմբերին Կիլիկիոյ հայկական մամուլը գրեց՝ «ՀԱՃԸՆ ՈՉ ԵՒՍ Է»: Բայց այդ անկումը ոչ թէ ռազմական գործողութիւններու թերութիւնն էր կամ պայքարի ոգին թուլութիւնը, այլ՝ Կիլիկիոյ շուրջ հիւսուած դաւի մը մոռայլ վախճանը: Արդարեւ, անոր անկումը պէտք է դիտել ընդհանրապէս Կիլիկիոյ անկման ծիրէն ներս՝ իր ծանրակշիռ եւ աղէտալի հետեւանքներով:

Ուսանելի եւ թելադրիչ է Հաճնոյ հերոսամարտը երկու ատուներով՝

ա. ռազմական- փոքրաթիւ ուժեր հմուտ եւ խոհեմ մարտավարութեամբ կարողացան ոչ միայն տոկալ աւելի հզօր ու անգութ խուժանին դէմ, այլ՝ դիմադրական ճշգրիտ եւ ուսուցմանսիրուած քայլերով ահագին կորուստներ պատճառեցին անոր, սպառել անոր մարդկային եւ նիւթական զինանոցը: Ռազմարուեստի հոյակապ դրուագ է Հաճնոյ գոյամարտը՝ երբ աւանին բոլոր կարողականութիւնը՝ երիտասարդներ ու մարտիկներ, կիներ ու պատանիներ, ծերունիներ եւ պահեստային խմբակներ համակարգեալ, միասնական ու վճռական գործունէութեամբ փայլուն տողեր

Շաբ.ք էջ 18

ՊԱՏԿԵՐ ՄԸ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԵՆ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԴԱԻԹԵԱՆ

Մեր ներկան՝ որ Միջին Արեւելքի ցաւալի դէպքերով է տագնապած, եւ որ Հայաստանի մէջ իշխանափոխութիւն պահանջող ցույցերով է մտահոգուած, եւ որ էպօլա կոչուող հիւանդութեամբ է անհանգստացած, մեզ կը մղէ ծուարիլ անկիւն մը եւ բանալ յիշատակներու մեր ալպոմը ուր կան պատկերներ մեր անցեալէն, եւ այս պարագային՝ Պէյրութէն:

Yerevan on cash operations between Armenian and Iranian banks due to Western sanctions against the Islamic Republic. Reisi said in March that the ongoing easing of those sanctions bodes well for the project's implementation.

The under-construction line would allow for a sharp increase in exports of Armenian electricity to Iran. That electricity is generated by Iranian natural gas delivered to Armenian thermal power plants.

During his meeting with Rouhani Hovik Abrahamian conveyed Armenian President Serzh Sarkisian's invitation to the Iranian President to visit Yerevan to attend the commemoration of the 100th anniversary of the Armenian Genocide on April 24, 2015.

Turkish Justice Ministry Clears Way for Probe

Continued from page 1

According to reports, Dink was called to a police department and "warned" about the plot against him, fueling the belief that the murder was known by some institutions within the

state beforehand.

One of Dink's lawyers, Fehriye Çetin, argues in a book published last year on the murder case that the order to kill was given by the Turkish National Intelligence Organization (MIT) via an encrypted message.

Yervant Babayan Memorial Honors an Educator, Visionary

BURBANK, CA - Midway through a memorial held in honor of Mr. Yervant Babayan, a lifelong Armenian educator, on Friday, October 3 at the Western Diocese of the Armenian Church of America, 11 elementary aged students in matching blue and white uniforms complete with a light blue handkerchief tied around their necks, joined their hands together and sang the "Hayr Mer."

These young individuals, the inaugural students of the newly dedicated Yervant Babayan Armenian Saturday School of the Crescenta Valley Armenian Apostolic Church, were a testament of Mr. Babayan's dedication to the importance of education in particular the Armenian youth in the Diaspora. Mr. Babayan was laid to rest in August of this year, yet his influence and legacy continues on through Armenian school students such as those of the Crescenta Valley, who sang five songs, reflecting the richness of the Armenian culture and the vibrant Armenian community in the Diaspora.

The memorial celebration provided the opportunity for those close to Mr. Babayan to share their personal memories and elaborate on his educational endeavors, namely as principal of the Vahan Tekeyan School in Beirut, Lebanon for over 30 years as well as an instrumental figure in the Tekeyan Cultural Association, Democratic Liberal (Ramgavar) party, AGBU and the Armenian Diaspora as a whole.

Keynote speaker Dr. Krikor Adanian gave an impassioned speech about what he had learned from Mr. Babayan even though he had never been his student. He noted that he never pursued fame and glory instead serving his community with principle and integrity.

"Mr. Babayan answered the noble calling of being an educator, community leader and a writer, contributing richly even in his advanced age," said Adanian.

He stated that his former students occupy dominant roles in Armenian Diasporan life, in the realm of ecclesiastic and civic life.

In his speech, Dr. Arshag Kazanjian, editor of Massis Weekly, emphasized that Mr. Babayan dedicated his entire life to service of Armenian literature, culture and education.

"For generations he educated young men and women with a sense of pride in their culture and homeland," said Kazanjian. "He tirelessly advocated the merits of being a true Armenian and promoted the strengthening of Armenian-Diaspora ties. He leaves behind a rich legacy and it is incumbent upon the new generation to carry this torch."

One of his first students, Mr. Paylag Aharonian recounted his impressions of Mr. Babayan when he arrived from Aleppo in 1935 to teach at AGBU's Nourbarian School in the northern Lebanon city of Tripoli.

"He was a young well-dressed and energetic teacher, who in a very short time made himself loved by all of us and we in return loved him," said Aharonian. "Teaching was the ultimate joy in his life."

Alluding to his oratorical skills, Aharonian added that, "his speeches,



patriotic or otherwise were simply magical."

Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church of America, made a compassionate case as to why Babayan was universally loved and admired. Among seven of his former students who attained an eminent position in the Armenian church hierarchy, Archbishop Derderian said Mr. Babayan was a witness and participant of 20th century Armenian history, from the Armenian Genocide to the revival of the Armenian Diaspora, to the independence of Armenia and the liberation of Artzakh.

"Mr. Babayan was a patriot who longed for the Motherland and Holy Etchmiadzin," said Archbishop Derderian. "Through it all he steadfastly remained the messenger of faith."

On behalf of the Babayan and Karayan families, Dr. Silva Karayan delivered a talk in Armenian and in English thanking the public at large, ecclesiastics and civic leaders in the community for their outpouring sentiments of gratitude to Mr. Babayan's life-long dedication to the Armenian nation.

Dr. Karayan highlighted the fact that even until the very last days of his life, Babayan kept close touch with people around him and followed the events of Armenian life.

Opening remarks were made by Armenian community activist and former student of Babayan's at Vahan Tekeyan School, Levon Keshishian, who served as the memorial's master of ceremonies.

"Although thousands of his former student all over the world are mourning the passing of Yervant Babayan, yet they all are immensely proud of their legendary teacher and principal," said Keshishian, who added that he was privileged to have been both his student and later, provisionally, member of his staff.

The event concluded with a Requiem Service (hokehankisd) and a memorial luncheon (hokejash) at the Nazareth and Sima Kalaydjian Hall where Archbishop Vatche Hovsepian, a longtime acquaintance of Mr. Babayan's recounted his very first meeting with Mr. Babayan at the old Vahan Tekeyan School that was a collection of rooms in rented buildings at the edge of a Bourj hHmoud shanty town neighbourhood in the mid-fifties. He spoke of the remarkable changes the school underwent over the years under Mr. Babayan's leadership.

The Grand Opening of AMAA's Khoren and Shooshanig Avedisian School and Community Center



On Wednesday, October 8, the Armenian Missionary Association of America (AMAA) celebrated the Grand Opening of the Khoren and Shooshanig Avedisian School and Community Center.

Participants at the opening included: Mr. Serzh Sarkisian, President of the Republic of Armenia; Armen Ashotian, Minister of Education and Science; Bradley Busetto, UN Resident Coordinator and UNDP Resident Representative; Hranush Hakobian, RA Minister of Diaspora, national and local government officials; members of the Avedisian and Bilezikian families; Rev. Dr. Paul Haidostian, President of Haigazian University; Joseph Zeronian, Ed. D., AMAA President; Zaven Khanjian, AMAA Executive Director and CEO, and hundreds of local and international guests.

The first ribbon cutting ceremony was at the Bilezikian Building, by the members of the Bilezikian family, followed by the ribbon cutting ceremony of the Avedisian School.

Following a beautiful symbolic Armenian traditional dance, Melanya Geghamian, principal of the school conducted a tour of the building for President Sarkisian. He was very impressed and inquired about several aspects of the LEED certification and the facilities; our student body, and our plans for the future.

In his remarks, Mr. Khanjian stated, "1600 years ago, Saint Mesrob's invention of the Armenian Alphabet and its direct and significant impact of translating the Bible into Armenian is commemorated in the month of October. Could there be a more appropriate, worthy, sacred and wise expression of gratitude to reciprocate that immortal gift to the Armenian nation than the realization of the dream of the Avedisians and Bilezikians, with the implementation of this beacon of education, a newly constructed, modern and magnificent school."

"Today, with the official dedication of this sacred structure, it is the heartfelt wishes of the Avedisian and Bilezikian families, joined with members and supporters of the Armenian Missionary Association of America,

that these wonderful children, born in our sacred Motherland, following the example of the immortal martyred poet, spark their young impressionable minds with the perpetual light of learning provided at the Avedisian School and the Bilezikian Building", stated Mr. Khanjian, who also thanked President Sarkisian for honoring the Grand Opening and this historical and memorable day by his participation.

There were two special components of the day. The first was President Sarkisian bestowing The Presidential Medal of Movses Khorenatsi to Mr. Edward Avedisian for his outstanding achievements in the spheres of culture, art, literature, education, social sciences and sports. Mr. Sarkisian thanked all those who through their active participation, contribution and input move Armenia forward and make it a better place for its people.

The second special component of the day was when Mrs. Pamela Avedisian offered some very touching remarks in Armenian and proceeded to playing two beautiful classical pieces on the piano that she had dedicated to the school in honor of her parents.

The day also included individual ribbon cutting ceremonies of the spaces for which other benefactors were present to celebrate. The guests then toured the facilities, while other benefactors conducted ribbon-cutting ceremonies of classrooms.

At the evening banquet, Joseph Zeronian, Ed.D., President of the AMAA Board of Directors addressed more than the 220 guests who attended a lavish dinner. He offered the sincere thanks of the entire Board to all of the donors of the School and the other fine work of the AMAA.

The PAROS Chamber Choir, comprised of mostly disabled musicians who perform while seated in their wheelchairs, provided a stunning presentation of a medley of sacred music and Komidas songs.

The amazing historical and memorable day thus ended with all attendees moving away with a feeling of awe, gratitude and thankfulness to the benefactors and AMAA for this magnificent achievement.

ԶՈՒԻՑԵՐԻԱՑԻ ՄԵԾ ԶԱՅԱՍԵՐ ԵԱԳՈՊ ՔԻԼՆՑԼԵՐԻ ԳՐԶԵՆ ԴՐՈՒԱԳ ՄԸ՝ ԶԱՃՈՆԻ ԵՒ ԶԱՃՈՆՑԻՒ ՄԸ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԵՆ

ԴՈԿՏ. ԱՐԷԼ ՔՆՆՑ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վերջերս ուսումնասիրութիւն մը ներկայացնելու ծրագրով կը թղթատէի գուլիցերիացի հայասերներու նախաձեռնութեամբ 1916-1944 թուականներու ընթացքին Պագէլի մէջ հրատարակուած «Mitteilungen Über Armenien - Տեղեկութիւններ Հայաստանի Մասին» անունը կրող պարբերութեան: Ինչպէս թերթին անունն արդէն կը յուշէ, գուլիցերիացի հայասերները սոյն հրատարակութեան միջոցով աշխատած են ջերմ պահել գուլիցերիացի ժողովուրդին մարդասիրական զգացումները օսմանեան բունատիրութեան տակ հեծող հայութեան նկատմամբ, հարողորդելով հաւաստի տեղեկութիւններ ժամանակի տիրուր անցուդարձերուն մասին: Թերթը իր սիւնակներուն մէջ պարբերաբար տեղ տուած է նաեւ գուլիցերիացի միսինոնարներու կողմէ «Զուլիցերիոյ Հայասերներու Միութեան» փոխանցուած վկայութիւններուն: Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարածքին իրագործուող բռնի տեղահանութիւններուն եւ ցեղասպանութեան վերաբերեալ: Հոսակ ան հետապնդած է գերագանց նպատակ մը՝ քաջալերել գուլիցերիացի բարեգործները յարատեւելու համար իրենց մարդասիրական ներդրումներուն մէջ՝ ի նպաստ մահուան ճիրաններէն ճողոպրած հայութեան մնացորդացին, Մերձաւոր Արեւելքի գանազան երկիրներուն, մասնաւորաբար Սուրիոյ եւ Լիբանանի մէջ քաղաքացիական ապաստանարան գտած հայութեան վտարանդի եւ որբ զաւակներու գոյատեւման աշխատանքներուն:

Կարգ մը հետաքրքրաշարժ տեղեկագրութիւններու եւ յօդուածներու շարքին, ուշադրութիւնս կեդրոնացաւ կարճ պատմութեան մը վրայ, որ տպագրուած էր նոյն թերթի 1938 թուականի Մարտ ամսուան 80-րդ թիւին մէջ: Պատմութեան մը, որ կը կրէ «Հայուն Աստուածաշունչը» խորագիրը, ինծի համար մասնաւոր կարեւորութիւն կը ստանար ոչ միայն այն հանգամանքով, որ կը ներկայացնէր տոհմի օրրանը հանդիսացող արժուէրոյն Հաճընի եւ Հաճընցի մը կեանքի պատմութեան գրուած մը, այլ նաեւ այն փաստով, որ սոյն պատմութեան մը, հոս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ վկայութիւնը, կը հանդիսանար մեզի համար ցարդ անյայտ մնացած գրագաստ-վկայաբանական յուզիչ արգասիքներէն մին գուլիցերիացի քաջամասնօթ հայասեր Եագոպ Քիւնցլերի (Jakob Kunzler):

Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած եւ որբութեան կրակէ շապիկը հագած սերունդի հաւաքական յիշողութեան մէջ դեռ վառ կը մնայ այս մեծ երախտաւորին՝ Եագոպ Քիւնցլերին անմեռ անունը: Գերմաներէն լեզուով շարադրուած պատմութեան մը, որ բուն շարժառիթն է առկայ յօդուածին, թարգմանաբար ներկայացնելէ առաջ, միանգամայն շահեկան պիտի ըլլար այստեղ համառօտ գիծերու մէջ անգամ մը եւս անդրադառնալ այս մեծ հայասերին բազմաբովանդակ կեանքին եւ բեղուն գործին:

Եագոպ Քիւնցլեր ծնած է 1871 թուականին Զուլիցերիոյ Ափենցել



Եագոպ Քիւնցլեր

Առւերհոտեն քանթօնի Հոննովիլ գիւղը: Պատանի տարիքին կը կորսնցնէ հայրը եւ աւելի ուշ՝ մայրը: Զրկուելով ծնողական գուրգուրանքէ, կը տրուի ազգականներու խնամքին: Դպրոցական տարիներու ընթացքին կը դիմէ տարբեր աշխատանքներու եւ Աարաուի Շթայն քաղաքին մէջ կը սորվի հիւանդութեան արհեստը: Սոյնը սակայն գոհունակութիւն չի տար իր սրտին. հոգեւոր-կրօնական ներքին կոչում մը գինք կը մղէր ծառայական աշխատանքի, կոչում մը, որ պիտի դառնար իր համակ կեանքին գերագանց առաքելութիւնն ու բովանդակութիւնը: Անսալով այս խորունկ համոզումին, իր հոգեւոր կանչին, 1891 թուականին կը դիմէ Պագէլի «Diakonenhaus - Մարկաւագաց Տուն(1)» ուսումնարանը, ուր կը ստանայ հիւանդախնամի կրթութիւն: 1894-1899 թուականներուն Քիւնցլեր կը ծառայէ Պագէլի քաղաքացիական հիւանդանոցին մէջ: Այս միջոցին, Ուրֆա մեկնած պագէլցի բժիշկ Հերման Քրիստի միջոցով ան կը ծանօթանայ, յետագային, «Հայ ժողովուրդի դատին մեծ պաշտպան», արդարօրէն «Հայութեան իրաւաբան» (Anwalt des armenischen Volkes) յորջորջուած Եոհաննէս Լեփսիուպի, որ գինք կը ներգրաւէ իր հիմնած «Armenisches Hilfswerk - Հայկական Նպաստամատոց» կազմակերպութեան մէջ: 1899 թուականին Քիւնցլեր բժիշկ Հերման Քրիստի մօտ օգնականի պաշտօնով կը մեկնի Ուրֆա, ուր դեռ եւս 1897-էն սկսեալ կը գործէր հիւանդանոց մը, զոր հիմնած էր Յիւրիւրէն բժշկուհի մը՝ Ժոզեֆին Յիւրիւրէն անունով: Ուրֆայի գուլիցերիական այս հիւանդանոցը կը գործէր Արեւելքի մէջ գերմանական առաքելութեան պատասխանատուութեան ներքոյ, եւ կը կազմէր մինչ այդ «Հայ կական Նպաստամատոց»-էն «Deutsche Orient-Mission - Արեւելքի Մէջ Գերմանական Առաքելութեան» անունանափոխուած կազմակերպութեան հովանիին տակ՝ Պերլիւնի մէջ ունենալով իր վարչական կեդրոնը: Ահաւասիկ այստեղ է որ Եագոպ Քիւնցլեր, սկիզբը՝ իբրեւ բժիշկի օգնականի, ապա՝ բժիշկի բացակայութեան բերումով՝ բժիշկի, իսկ աւելի ուշ, այսինքն մինչեւ անոր լուծարումի թուականը՝ 1922, դեկամբրի պաշտօնով անձնապէս ինք է որ կ'առաջնորդէ մարդասիրական այս կարեւոր կեդրոնը:

Հայ ժողովուրդի պատմութեան ամենադժնդակ տարիներուն, Եագոպ Քիւնցլեր իր կնոջ՝ Էլիզապէթի հետ կը դառնան հեղինակաւոր վկաներէն արեւմտահայութեան վայրագ բնաջնջումին, որ Երիտթուրքերու կառավարութեան կողմէ կանխամտածուած եւ բոլոր մանրամասնութեանց մէջ հետեւողականօրէն ծրագրուած մարդկութեան դէմ ոճիր մըն էր, բառին բուն իմաստով, գերազանցելով ցեղասպանութիւն մը ըլլալու բոլոր չափանիշերը: Նախապէս, Համիտեան կոտորածներու ընթացքին, Ուրֆայի հայ բնակչութիւնն ալ տուժած էր թուրք-քրտական բարբարոսութիւններէն, տալով իր հարաւոր գոհերը: Ուրֆայի մայր կեկեղեցիին մէջ միայն՝ պատասպարած երեք հազար հայեր հրոյ ճարակ դարձած են իրենց ճենճերող մարմիններուն վրայ քարիւղ ողորդ թուրք եւ քիւրտ ջարդարներու դիւալին քրքիջներուն տակ:

Դեռ 1914-ին, ուղեւորութեան մը առթիւ, երբ Եագոպ Քիւնցլեր Պաղտատէն կ'անցնէր, կառքին մէջ ակամայ ականջալուր դարձած էր Երիտթուրք ղեկավարներէն Նեֆիս Պէյի չարաբաստիկ արտայայտութեան. «Մենք՝ թուրքերս, հայերը առանց բացառութեան՝ մասնակի կամ ամբողջութեամբ պիտի բնաջնջենք, կամ ալ զիրենք պիտի պարտադրենք տարագրութեան: Մեր

չունեցող կամ զլացուած ամէն օգնութիւն շատ ու շատ ուշացած պիտի ըլլար արեւմտահայութեան կեանքն ու հայրենիքը փրկելու համար: Արեւմտեան մեծ պետութիւններու դիւանագիտութիւնը այս ողբերգութեան մէջ կը հետապնդէր այլ նպատակներ, հետաքրքրութիւններ, որոնց պողպատեայ կուռ օրէնքը չի զիջիր բարեկամական յարաբերութիւններու, զգացական իրավիճակներու, կրօնա-բարոյական արժէքներու առջեւ: Անոր համար նոյնիսկ չկան յարատեւ թշնամիներ ու բարեկամներ, այլ՝ կան միայն յաւիտեական շահեր: Արեւմտահայ ժողովուրդի մը կամ միացեալ Հայաստանի մը գոյութիւնը դուրս կը մնար միջազգային դիւանագիտութեան արժեքափերու ճիրէն: Պատմական փաստերը ցոյց տուին, որ Փոքր Ասիոյ տարածքին Օսմանեան թուրքիոյ հողային ամբողջականութիւնը պահպանելը շատ աւելի առաջնահերթ էր արեւմտեան մեծ տէրութիւններու տնտեսական-քաղաքական շահերուն համար, քան՝ իրենց հաւատակից ցեղասպանող ժողովուրդի մը փրկութեան գործը:

Ուրֆան հայոց նահատակութեան այդ արհաւիրից օրերուն դարձած էր անցումային խաչմերուկ մը, ուր Արեւմտեան Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններէն ու քառուղիներէն կ'անցնէին այն տա-



Եագոպ եւ Էլիզապէթ Քիւնցլեր

կայսրութեան սահմաններուն մէջ անոնց հետ ապրիլը միանգամայն բացառուած է»: Դահիճին այս խոստովանութիւնը պիտի իրականանար շուտով եւ, ահաւասիկ, Եագոպ Քիւնցլեր, արդէն 1915-ի զարնան, իր օրագրին մէջ պիտի նշէր. «Քաղաքի թուրքերը հայերու դէմ կը սպառնան գրեթէ ամէն օր»: Մահուան ստոյգ վտանգը կը թեւածէր օդին մէջ: Արդարեւ, երբ չարին կործանարար ալիքը նոյն թուականի Օգոստոսի կէսերուն կը հասնի Ուրֆա, ձերբակալուելու կը սկսին տեղւոյն առաջին հայ ընտանիքները՝ խոշտանգուելով բանտերուն մէջ կամ ենթարկուելով դէպի Տէր Զօր տանող մահուան երթին, Եագոպ Քիւնցլեր իր բոլոր միջոցներով, երբեմն նոյնիսկ վտանգելով իր կեանքի ապահովութիւնը, կը փորձէ ահագանգել Հալէպի մէջ առկայ միջազգային դիւանագիտական աստեաններուն առջեւ, բայց՝ ի գուր. Ա. Համաշխարհային Պատերազմի թանձր ստուերին մէջ, միեւնոյնն է, արդէն իսկ գոյութիւն

րագրուած բիւրաւոր հայորդիներուն խումբերը՝ խրտուելիականերու կերպարանք առած տարեց մարդերուն, ցնցոտիներու մէջ եւ յաճախ կիսամերկ՝ ոսկրացած մարմինները հայ կիներուն, սովալլուկ, վատոյժ երեխաներուն, որոնք, նման սպանդանոց քշող անասուններու հօտերուն, թուրք ոստիկաններու խժոժութիւններով, սեռային տարատեսակ բռնութիւններով, եաթաղանի հարուածներու ուղեկցութեամբ կը քալէին, կ'անցնէին օրերով անվերջ, դէպի Տէր Զօր տանող ճամբաներուն վրայ ձգելով իրենց անթաղ դիակները: Դէպի Սուրիոյ անապատը տանող մահուան երթը հայութեան, հարիւրաւոր եւ հարաւոր տարագրուածներէ կազմուած, վերածուած էր համակեդրոնացման շարժուն ճամբարներու, որոնք մին միւսին ետեւէն կու գային ի վերջոյ տառապալից հիւծելու, վերջանալու համար մինչեւ Տէր Զօրի երկայնքին տարածուող

ՀԱՅՈՒՆ ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ «ՀԵՒՔ»Ը



ԴՈԿՏ. ՀՐԱԹՐ ԶԷՊԷՃԵԱՆ

Բայց արդեօք միայն կիրակի օրերն են հայուն «հեւք»ը...:

Երեւի շաբթուան բոլոր օրերը, բայց այս «հեւք»-ը ապրեցայ, երբ կիրակի, 5 հոկտեմբերին ամբողջ օր մը անցուցի Սուրբ Սարգիս եկեղեցոյ մէջ, Տալլաս, Միացեալ Նահանգներ:

Եւ կիրակի օրուան մը հեւքն էր, գոր հայկական փոքր գաղութը կ'ուզէ իւրաքանչիւր վայրկեան լաւապէս «ապրիլ», որպէսզի օգտակար արդիւնք ունենայ՝ ըլլայ անհատական, բայց մանաւանդ հաւաքական կեանքերուն համար: Ամբողջ կայսր մէջ եւ երեւի քիչ մը ամէն տեղ՝ այս օրերուն խճողուած յայտագիրները եւ առօրեայ կեանքի պահանջները՝ առիթ չեն տար, որ մարդ մտածէ ինքն իր մասին, բայց նաեւ՝ իր մշակոյթին, լեզուին ու հաւատքին:

«Հայութիւնը կ'ուզեմ պահել իմ հոգեւոր ծառայութեանս միջոցով»:

Ղեւոնդ քահանայ Աճառեանը հոգեւոր հովիւն է Սուրբ Սարգիս Հայաստանեայց առաքելական եկեղեցոյ: Հազիւ երեսուն տարիքը բոլորած է, բայց արդէն մեծ նուիրումով լծուած է իր գաղութին հոգեւոր եւ ազգային ծառայութեան Օհայօ ծնած է՝ իտալացի մօրմէ եւ հայ հօրմէ, մօրը քաջալերանքը մեծ եղած է զինք հոգեւոր ծառայութեան մղելու իմաստով, բայց նաեւ կայ հայկականութիւնը: Իտալացի մայրը համոզումով կառչած է իր ամուսնոյն ազգային ինքնութեան եւ իր գաւակը մղած է այդ ուղղութեամբ, այնքան որ Ղեւոնդ քահանան հպարտութեամբ կ'ըսէ. «Հայերէնը շատ գեղեցիկ լեզու է...»: Բայց նաեւ՝ «լեզուն կ'որոշէ մարդուն եւ հաւաքականութեան մշակոյթը եւ կենցաղը»:

Եւ այս համոզմունքով, ան կամաց-կամաց՝ ինքնուստիված է հայերէն, բայց նաեւ ամուսնանալով Հայաստանէն հայուհիի մը հետ, կրցած է կազմել հայկական տուն մը, ուր միայն հայերէն կը խօսին...:

Տալլասի հայ գաղութը կը հաշուէ չորս հարիւր յիսուն ընտանիք: ԶախՉախիչ մեծամասնութիւնը եկած է Միջին Արեւելքէն, նաեւ՝ Թուրքիայէն: Ազգային ինքնութեամբ փիտրուն հաւաքականութիւն է, որ եկեղեցոյ շուրջ համախմբուելով «հեւքի» մէջ է՝ հայութիւնը պահելու տեսլականով...: Իսկ հեւքը...:

«Փորձեցինք շաբաթ օրերը մանուկները եկեղեցի բերել, որպէսզի հայերէն սորվեցնենք: Չյա-

ջողեցանք՝ գործնական պատճառներով»: Բայց այդ «չյաջողիւր» չէ յուսահատեցուցած տէր հայրը եւ ժողովուրդը: «Կիրակի օրերը որոշեցինք զիրենք եկեղեցի բերել՝ թէ՛ հայերէն կը սորվեցնենք, եւ թէ՛ Աստուածաշունչի դաստիարակութիւն»:

Եկեղեցական Ս. պատարագի ժամանակ աւելի քան երեսուն մանուկ-պատանիներ մտան եկեղեցի: Իրենց կիրակի օրուան դասապահերը ամբողջացնելէ ետք, բոլորն ալ կը մասնակցին եկեղեցական արարողութեան: Բայց ուշագրաւ էր այն, որ Ղեւոնդ քահանան պատարագի ընթացքին հրաւիրեց պատիկները համախմբուելու խորանին չորս կողմը եւ ծալլապատիկ նստեցնելով զիրենք՝ սկսաւ խօսիլ եւ պատմութիւն պատմել: «Յիսուս ալ առակներով խօսեցաւ մարդոց հետ, որպէսզի հասկնան», ըսաւ տէր հայրը՝ շեշտելով. «Պէտք է մանուկները եկեղեցի բերենք, որպէսզի ուրիշ տեղ չերթան...»: Ու չուշացաւ տէր հօր երիտասարդական խանդավառութեամբ դիպուկ կատակը: «Մենք շատ պաշտօնական ենք: Արժէ քիչ մը փոխել եւ փոխուիլ...»:

Եւ կիրակին շարունակուեցաւ Տալլասի հայկական եկեղեցոյ մէջ:

Եկեղեցոյ մէջ եղողները մեծ անձկութեամբ լսեցին իմ ելոյթս՝ «Քրիստոնեայ համայնքներու իրավիճակը ներկայ Միջին Արեւելքի տաղանայներու ընթացքին» նիւթին մասին: Թէեւ կը լսէին հետաքրքրութեամբ, բայց նաեւ կը տեսնէիր կարօտը եւ մտահոգութիւնը իրենց աչքերուն մէջ: Բայց չէ, որ կեանքեր ապրած են իւրաքանչիւրը այս Միջին Արեւելքի երկիրներուն մէջ...: Պէյրութը, Հալէպը, Դամասկոսը, Պաղատա, Պոլիսը ու տակաւին: Երախտապարտ են իրենց ծննդավայրերուն, ուր իրենց ստացած դաստիարակութիւնը այսօր իւրաքանչիւրը ի սպաս կը դնէ իրենց «նոր գաղութի» յառաջխաղացքին համար: Նոյն սփիւռքահայուն հեւքն է ու այս հեւքին ստեղծած «տաղնապը», որ կը շարունակուի եւ երեւի աւելի արագ...: Բայց նաեւ՝ աշխուժ:

Հաւաքական ճաշէն ետք՝ կային երգչախումբի եւ պարախումբի փորձերը՝ պատրաստուելու համար վերամուտի գեղարուեստական ու հայկական տոհմիկ երեկոյին: Հետեւեցայ երիտասարդներուն եւ պատանիներուն երգին ու պարին...: Եթէ մէկ կողմէ կար ուրախութիւն, բայց նաեւ հպարտութիւն...: Եւ այս հեւքոտ կեանքը աւելիով կ'ամրացնէր իրենց մէջ հայուն հպարտութիւնը:

Տէր հայրը հաւատացողն է, թէ ազգային ինքնութիւնը եւ քրիստոնէական հաւատքը հայուն նկարագիրին անբաժանելի մասնիկներն են: «Չես կրնար իրարմէ բաժնել», ըսաւ ան: Բայց նոյնպէս մտահոգ է հայուն «կոտորակուած» վիճակով...: «Պէտք է մտածենք որպէս մէկ միաւոր, երբ կը խօսինք գաղութին մասին»: Եւ Տալլասի մէջ ալ, սփիւռքեան մեր միւս գաղութներու նման, իւրաքանչիւր անհատը կ'ուզէ կառչել իր «նմաններուն» իր նախկին երկրին ինքնութեան եւ կենցաղներուն: Եւ այս ալ հայուն «հեւքին» մէկ անբաժան մասն է: Իւրաքանչիւր հայ իր ազգային ինքնութեան հետ՝ կը փնտռէ իր «Պէյրութի հմայքնե-

հեւքը», բայց նաեւ սիրեցի գացն: «Գունաւոր» խճանկար մը՝ ուր իւրաքանչիւրը իր գոյնով եւ բոյրով՝ մէկ գեղեցիկութիւն մը կ'աւելցնէր հայուն համընդհանուր գոյապատկերին մէջ: Բայց այս «հեւքը» նաեւ ապրիլ է եւ ապրեցնող: Թէկուզ հեռու՝ այսպէս ըսած աշխարհի մէկ անկիւնը, բայց շարժուն վիճակ մըն է, որ կենդանութիւն կը շնորհէ: Եւ այս կենդանութիւնն է որ հայը պիտի ապրեցնէ:

Տէր Ղեւոնդ իր երիտասարդական աւելիով եւ ուժով կը սիրէ այս ապրող եւ ապրեցնող վիճակը: «Առաքեալ կը նշանակէ առաջ երթալ յատուկ առաքելութեամբ: Պէտք է հայուն երթալ եւ զինք գտնել ու պահել...»:



ըր»՝ «մեր Հայկապը», «Պաղատաի արմաւենիները», «Պոլսոյ Պոսֆորը» եւ տակաւին...: Իւրաքանչիւրը սուած է նկարագիր եւ ոճ, որ կերտած է նաեւ նկարագիր եւ մշակոյթ՝ դառնալով իւրաքանչիւր սփիւռքահայուն հոգեհատորը...:

Տալլասի մէջ՝ մէկ կողմէ ապրեցայ «հայուն կիրակի օրուան

Հայուն հեւքն է այս...: Առաջ երթալ եւ հայը գտնել, բայց նաեւ՝ պահել...: Պահել իր ազգային ու քրիստոնէական ինքնութեամբ:

Եթէ Տալլասի մէջ հեւքի օրը «կիրակին» է՝ բայց հայուն հեւքը ամէն օր է եւ ամէն տեղ:

Եւ հայուն «հեւքը»՝ նոյն հայը գտնելն ու պահելն է...:

ԱՆՏՈՒՆԻ ՆԻՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Երկրաշարժի ականատես Նինա Համբարձումեան ծնած է 1928 թուականին: 1988ի Կիւմրիի երկրաշարժի ժամանակ կորսնցուցած է իր երկու սենեակներէ բաղկացած բնակարանն ու ամուսինը: Ներկայիս կ'ապրի տնակի մը մէջ: Միշտ դիմած է տուն մը ունենալու համար եւ միշտ ալ մերժուած է: 40 տարի աշխատած է որպէս գիւղատնտես:

Այս գրութեամբ կը ցանկայ իր տանջանքը լսելի դարձնել ողջ աշխարհին:

Խմբ.

Երկրաշարժից դաժան ու խիստ Սեռեալներն իսկոյն բարձրացան երկինք, Գտնելով այնտեղ եւ տուն, եւ հանգիստ:

Ողջերն էլ ինձ պէս, քարերը գրկած, Արցունքն աչքերին գահավիժին ցած՝ Մնալով այնտեղ մայր հողին կպած:

Ու 25 տարի լքուած մոռացուած, Ապրում ենք այսպէս առնետների հետ,

առնետների պէս իմ տնակն ու ես, Մէկը՝ ծերացած, միւսը՝ ժանգոտուած, Գոյատեւում ենք լուռ ու պնդերես իմ տնակն ու ես...

Պարոնայք հայեր, պաշտօնեայ այրեր, Մարդուն անվայել այս պայմաններում

Միմչ ե՞րբ պիտի ապրենք մեր տնակներն ու մենք: 7 Դեկտեմբեր 1988 թ. Կիւմրի

Ձեր Ծանուցումները Վստահեցե՛ք «Մասիս» Շաբաթերօրին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ »ԴԵՊԻ ԿԻԼԻԿԻԱ ԵՒ ԱՐԵՎՍԱՅԱՅԱՍՏԱՆ (23 ՍԵՊՏ. - 5 ՀՈԿՏ. 2013) ՍՈՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՄՈՐՄՈՔՆԵՐ ԱՆԻ

ՎԵՐ. ԵՍՍԱՑԻ ՍԱՐՄԱՋԵԱՆ

Ուրբաթ 4 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 10:00-ին, ճամբայ կ'ելլենք երթալու համար Անի, որ Կարսէն 35 քմ. արեւելք կը գտնուի: Թէեւ Անին ճանչցուած է որպէս 1001 եկեղեցիներու քաղաք, բայց ասիկա չափազանցութիւն է: Այսպէս կոչուած է պարզապէս իր ունեցած բազմաթիւ եկեղեցիներուն համար:

Որպէս հայկական հողամաս եւ Կարսին մօտակայ քաղաք, անոնց պատմական ճակատագիրը եղած է յարուճման: Անին որ հիմնուած է 4-րդ դարուն Կամսարական իշխաններու կողմէ, ճիշդ Կարսին պէս եւ Կարսէն ետք (961-ին) եղած է Բագրատունիներու թագաւորութեան մայրաքաղաքը: Կարսին պէս գրաւուած եւ քանդուած է արաբներու, սելճուկներու եւ մոնկոլներու կողմէ: Նոյնպէս ալ զոհը եղած է բիւզանդացիներու դաւաճանութեան, խոստանալով որ գանիկա պիտի պաշտպանեն սելճուկ, մոնկոլ եւ թրքական յարձակումներէն, որով Վեստ Սարգիս իշխանն ու Պետրոս Գետադարձ կաթողիկոսը իրաբան եւ քաղաքին 40 բանալիները անոնցմէ կը կորզեն: Բայց միայն 20 տարի վերջ վերոյիշեալ վայրի ցեղերը գանիկա քարուքանդ կ'ընեն: Իսկ 1319-ի երկրաշարժի պատճառով հիմնապէս կը կործանի եւ ապա թուրք աւատապետներուն սեպհականութիւնը կը դառնայ: 1878-ին Ռուսիոյ տիրապետութեան տակ կ'իջնայ, եւ վերջապէս 1920-ին կը յանձնուի թուրքերոյ: Այս բոլոր դժբախտութիւններէն վերջ, անշուշտ թէ՛ «Անի քաղաք նստեր կու լայ, չկայ ըսող մի՛ լար, մի՛ լար»:

Բայց ինչպէս, ինչպէս չլայ Անին, երբ իրմէ միայն 200 մէթր անդին, Ախուրեան գետի արեւելեան ափին վրայ կը գտնուի իր հարազատ եղբայրը՝ Հայաստանը, որու կը տեսնէ գիշեր ու ցորեկ, բայց չի կրնար հետը ոչ խօսիլ, ոչ ալ հաղորդակցիլ: Կը լսէ հոն աշխատող քարահաններու մէջ աշխատող հայ բանուորներուն ձայները եւ անոնց փշրած քարերուն ճաթոտոցները: Մինչդեռ ինք, մօտ 100 տարի է ի վեր, քարսիրտ եւ անգութ թուրք պահակներու կողմէ կը մնայ կալանաւորուած: Ինչպէս չլայ, Երբ ժամանակին ինք 100.000 բնակիչներու տեղ ու տուն էր, իսկ հիմա դարձած է արօտավայր թուրքի կովերու, այծերու, ոչխարներու, էշերու եւ ձիերու: Ինչպէս չլայ, երբ հիմա իր գաւակները - թոռները, ծոռերը - միայն երբեմն, եւ հազիւ միայն մէկ ժամ գինք կ'այցեցեն եւ ապա կը հեռանան, ո՛վ գիտէ անգամ մըն ալ երբ վերադառնալու յոյսով: Եւ յետոյ, ինչպէս, ինչպէս չլայ, երբ գինք անգթօրէն կալանաւորող եւ բռնադատող ալլահսըք թուրքը նոյնիսկ իր անունը, հայու հարազատ անունը՝ Անին, փոխած ու թրքացուցած է առանց ամչնալու եւ վերանուանած՝ Անը Orenyer, որ կը նշանակէ «Յուշերու տեղ»: Մինչդեռ, աւելի շիտակ պիտի ըլլար եթէ գանիկա կոչեր «փուշերու տեղ», որովհետեւ ճիշդ այս է որ կը զգայ - եւ չի կրնար տարբեր զգալ - ոեւէ հայ ամէն անգամ երբ կը կոխէ ու կը շրջազայի անոր հողին վրայ: Այո՛,

կը փշաքաղի, կը խոցոտուի, կը սարսուի, կը մորմոքի եւ կը բորբոքի: Մանաւանդ, երբ կը տեսնէ իր շքեղ ու գեղաքանդակ եկեղեցիներուն, պալատներուն եւ դղեակներուն համար, օտար ճանապարհորդներուն կողմէ իսկ «Տիեզերական քաղաք» եւ «Նոր Հոռով» յորձորձուած այս քաղաքը կառուցանող տաղանդաւոր եւ մեծահամբաւ ճարտարապետներուն անունները, թէեւ յիշուած են, բայց աղաւաղուած, եւ դեռ, առանց յիշելու անոնց հայ ըլլալը: Պարզապէս օրինակ մը տալու համար, Սուրբ Աստուածածին մայր տաճարը, որու կառուցումը սկսած է Սմբատ Բ. Թագաւորը (989-ին), շարունակուած Գագիկ Ա. Թագաւորին կողմէ եւ աւարտած իր կնոջ Կաղարածիտէ թագուհիի հովանաւորութեամբ 1001-ին, անոնց ոչ հայ, ոչ ալ թագաւոր ըլլալը բնաւ չէ յիշուած: Իսկ անոր հանձարեղ ճարտարապետ՝ Տրդատին անունը փոխած են Tratatad-ի - շատ հաւանաբար դիտումնաւոր կերպով - եւ չեն ալ ըսած որ ան հայ էր: Բայց չեն մոռցած գրելու որ, ան 1607-ին վերանորոգած է Պոլսոյ յունական աշխարհահռչակ Այա Սօֆիա տաճարը, թերեւս ալ անուղղակի կերպով - հպարտութեամբ ցոյց տալու համար, թէ ան եղած է թուրք ճարտարապետ մը: Հայկական ճարտարապետութիւն: Թրքական խորամանկութիւն:

Բայց ներողութիւն: Արդար ըլլալու համար պէտք է ընդունիլ որ, անոնք Հայ (էրմէնի) բառը գոնէ մէկ անգամ (եթէ ոչ աւելի) գործածած են շատ յստակ եւ շեշտակի կերպով: Ահա թէ ո՛ր եւ ինչու՞:

Դէպի Անի մեր ճամբուն վրայ կը հանդիպինք ոչ միայն տիրահռչակ, այլ նաեւ սարսուլի եւ քստմենքի յուշարձանի մը որու վրայ գրուած է թրքերէն եւ անգլերէն - թէ՛ անիկա կառուցուած է ի յիշատակ այն թուրքերուն որոնք սպանուած են էրմէնի (հայ) բարբարոս ջարդարներու կողմէ: Բայց այս ջարդին թէ թուականին եւ թէ զոհերու թիւին անորոշութիւնը արդէն ցոյց կու տան անոր շինծու, սաղայէլական եւ թրքավայել ըլլալու իրողութիւնը: Ըստ կարգ մը ուխտագնացներու, հայոց կողմէ կատարուած թուրքերուն ջարդը պատահած է 1914-ին: Քանի մը տարի վերջ թուականը փոխուած եւ արձանագրուած է 1917: Յետոյ՝ 1918: Ապա վերջապէս՝ 1915, շատ հաւանաբար պղտորելու օտար զբօսաշրջիկներու միտքը թէ՛ 1915-ին ոչ թէ թուրքերը ջարդած են հայերուն, այլ ընդհակառակը՝ հայերն է որ ջարդած են թուրքերուն: Եւ դեռ, անորոշ է նաեւ, թէ ջարդուածներուն թիւը եւ թէ ջարդին պատահած վայրին անունը: Միթէ՛ այնքան դժուար է ասոնք ճշդելը: Ըստ ոմանց 147 թուրքեր սպանուած են: Ըստ ուրիշներու՝ 500:

Մինաս Գոճայեան կը գրէ. «Ըստ ցուցանակին, Կարսէն դէպի Անի ճամբուն վրայ թրքական գիւղ մը եղեր է (հիմա այդ գիւղին տեղն իսկ յայտնի չէ), որուն բոլոր բնակիչները բնաջնջուած են հայերու կողմէ»:

Իսկ Անահիտ Մէյմարեան, որ 2005-ին այցելած է Կիլիկիա, Պոլիս եւ Արեւմտեան Հայաստան, առ այդ իր գրած «Քարերը Կ'աղաղակեն»

սքանչելի պատմագրական եւ պահանջատիրական գիրքին մէջ կ'ըսէ թէ, յուշարձանին վրայ արձանագրուած է որ, այն գիւղը որու բնակիչները ջարդուած են հայերու կողմէ, կը կոչուէր Սուպաթոն, իսկ բնակիչներուն թիւը 500, թուականը՝ 1918:

Հիմա, հարցը ոչ ջարդին վայրն է, ոչ ալ ջարդուածներուն թիւը (որ բաղդատմամբ 1.5 միլիոն ջարդուած հայերուն, ոչինչ է): Այլ նախ, պատճառը - եթէ շիտակ է անշուշտ - թէ՛ ինչու՞ համար հայերը ջարդած են թուրքերուն: Իրենց կալ-



ուածներուն տիրանալու համար, վախէ կամ նախանձէ՞ դրդուած: Անկարելի է: Ծատ յստակ է թէ, ինչ որ պատահեցաւ հոն եւ բազմաթիւ այլ քաղաքներու մէջ ալ - Վան, Մարաշ, Չէյթուն, Այնթապ, Մուսա Տաղ եւ այլ վայրեր - պարզապէս ինքնապաշտպանութեան, իրենց քրիստոնէական հաւատքին եւ պայնական հողին կառուած մնալուն համար էր: Իսկ բուն հարցը, այս բոլորին աւելի - ինչպէս յայտնի եղաւ արդէն - սուտ, շինծու եւ շահագիտական շարժառիթներէ թելադրուած, այդ յուշարձանի կառուցումը արդարացին է պարզապէս:

Հետեւաբար, եթէ մէկ կողմէն Անիի անմեղ զոհերը, քանդուած սրբալոյս եկեղեցիները, հրաշագեղ պալատներն ու դղեակները, ճարտարապետական եւ քանդակագործական անթիւ ու գեղաքանդակ կառուցները մեծ ցաւ ու թախիծ կը պատճառեն գիրենք ցաւսիրտ դիտող հայ ուխտաւորին, սակայն միւս կողմէն ալ, այս կեղծ յուշարձանը անգուսպ եւ անսահման ցատում, զայրոյթ եւ պոռթկում կ'առաջացնէ անոր թէ սրտին, թէ մտքին եւ թէ հոգիին մէջ: Հապա ի՛նչ ըսել անոր, այս բոլորին տէրը, հայրն ու մայրը եղող յաւէտ դժբախտ եւ վշտաբեկ Անիին: Անշուշտ թէ անիկա կու լայ, կու լայ անդադար, գիշեր ու ցորեկ, եւ ո՛վ կրնայ համարձակիլ ըսել իրեն «մի՛ լար, ալ կը բաւէ»: Ոչ. չի բաւեր: Անին պիտի լայ, կամայ թէ ահամայ, ողբաձայն եւ բարձրաձայն, այնքան ատեն որ ան չէ վերադարձած Հայաստան: Երբ մանաւանդ, ճիշդ անոր դիմաց, միայն քարընկէցի մը չափ հեռու, սեւեր հագուած ու մոխրի վրայ նստած, ան դառնօրէն կու լայ ու կ'ողբայ:

- Ախ դու Անի, տանջուած Անի, Ե՛րբ դու նորից Հայաստան պիտ' վերադառնաս: Ե՛րբ... իրապէս կ'ուզե՛նք գիտնալ: Ահա՛: Ահա թէ երբ... Կը վերադառնանայ միայն այն ատեն, երբ գինք վերադարձնող մը ըլլայ: - Կա՛յ...

Ճիշդ այս խառնաշփոթ եւ հոգեխուով վիճակի մէջ կ'ընտան, կ'այցեցենք Անիի գլխաւոր եկեղեցիներէն միայն - Սուրբ Փրկիչ, Ամենափրկիչ, Սուրբ Աստուածածին մայր տաճարը եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ հաւանաբար ամենէն քիչ վնասուած եկեղեցին է, կառուցուած 1215-ին, Անի քաղաքէն մեծահարուստ վաճառական՝ Տիգրան Հոնենցի կողմէ:

Երբ սելճուկները 1064-ին կը գրաւեն Անին, Սուրբան Ալիասլանը Սուրբ Աստուածածին մայր

տաճարին մէջ կ'ընէ իր առաջին Ուրբաթ օրուայ արօթքը, ապա գանիկա կը վերածէ մզկիթի մը Fathiye (Յաղթական) անունով: Կ'երեւի թէ Անի քաղաքը գրաւելը եւ մայր տաճարը մզկիթի վերածելը յաղթանակ մը նկատած է: Յետոյ երբ քրիստոնէաներուն ձեռքը կ'անցնի, գանիկա նորէն եկեղեցի կը վերածեն: Բայց հետագային երբ թուրքերը կը գրաւեն Անին, անոնք եկեղեցին ոչ մզկիթի կը վերածեն, ոչ ալ թոյլ կու տան որ եկեղեցի կոչուի, հապա քաթեդրալ (cathedral), հաւանաբար ցոյց տալու համար իրենց չէզոքութիւնը: Մինչդեռ անիկա կը մատնէ իրենց յատուկ թրքական կեղծ դիւանագիտութիւնը: Բայց ինչ որ ալ էր անոնց նպատակը, եկեղեցիին թէ ներքին եւ թէ դուրսի արեւմտեան պատերու վրայ եղած քանդակները, անունները եւ հայերէն տառերով գրութիւնները, յայտնապէս ցոյց կու տան թէ անիկա իրական հայ եկեղեցի մըն է եւ ոչ թէ որեւէ եկեղեցի մը:

Տեսանք նաեւ Ջրաղաշտական տաճարի մը հետքերը որ նորոգուած է հորորող դարուն կիսուն եւ յետագային քանդուած... ո՛վ քանդած է գանիկա - հայերը, թուրքե՛րը, ե՛րբ, ինչու՞, այս ուղղութեամբ որեւէ արձանագրութիւն, գոնէ մենք չտեսանք:

Ամէն պարագայի - եւ ամենէն կարեւորը - Անի քաղաքին մեր տեսած ու չտեսած բոլոր կիսակործան եւ համակ կործանած եկեղեցիները, ճարտարապետական բազմաթիւ ու բազմատեսակ կոթողները, գեղակերտ քանդակներն ու որմնանկարները ցոյց կու տան հայ ժողովուրդին քրիստոնէական զօրաւոր հաւատքը եւ ստեղծագործական բացառիկ եւ եզակի հանճարը: Անգլիացի նշանաւոր դիւանագէտ, գիտնական եւ մեծ վաճառական՝ Հէնրի Լինչ, ի տես այս բոլորին, իր Armenia. Travels and Studies գիրքին մէջ իրաւամբ կը հաստատէ ասիկա եւ անոր յարակից անուրանալի ուրիշ ճշմարտու-

ԱՆՍԱՌ ՓԱՌՔԻ ՆԵՐՐՈՂ ՍՈՒՍԱՆԵՐԻ ԼԵՌԱՆ ԼԱՆՋԻ ՇԵՆԵՐԻ ՔԱՋԵՐԻՆ

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ
(Շարունակում նախորդ թիվին)

Ամբողջ ժողովուրդի մասնակցությամբ ընդհանուր ժողով են գումարել՝ «Պաշտպանական խորհուրդ» ընտրելու համար, որին պիտի շնորհուր վարչական գերագոյն իշխանությունները: Մուսա լեռցիները նուիրուած էին միտինարներու ուսուցանած ժողովուրդական ընտրութիւնների եղանակին: Թղթի պատառիկներ հաւաքել եւ փակագաղտնի քուէաթերթիկներով ընտրութիւն կատարել: Ստեղծուել է մարտական բոլոր ուժերը դեկավարող ու դիմադրութեան գերագոյն իշխանութիւն իրականացնող տասնընչորս ժողովականներից բաղկացած պաշտպանական-վարչական մարմնի խորհուրդ, որի ատենապետ է ընտրուել՝ Եօղունջուղի վերապատուելի Տիգրան Անդրէասեանը: Կոռուղները բաժանել են քառասուն երեք տասնապետներով տասնեակներ: Արտակարգ իրավիճակների համար ստեղծել են 33 քաջ մարդկանցից բաղկացած չէթէյական կազմակերպութիւն, բաղկացած երեք խմբերից, խմբապետներ՝ Եսայի Եղուկեան, Պետրոս Տմլազեան, Պետրոս Տուտազեան: Տասը-տասներկու տարեկան տղաներից կազմակերպել «Թէլէֆոնի Տղաք» խումբ, մարտի դիրքերից թշնամու յարձակումների լուրը հասցնելու կեդրոն: Մովսէս Տէր Գալուստեանը կարգուել է «Առաքման Տնօրէն-Մէլգիյաթ-Բէիսի», օգնականներ՝ Սերոբ Շէրպէթեան ու Տիգրան Գարսեան: Ռազմամթերքի վերակառու նշանակուել Ներսէս Գազանճեանը, որը ռազմամթերք է ուղարկել ռազմաճակատ, փաշփուշտներ վերալիցքաւորել: Կազմակերպչական այլ միջոցառումներ իրականացրել:

Յուլիս 21-ին, Սուէտիայի պարծենկոտ Միւտիւր՝ հայատեաց ալպանացի խալէտը, երկու հարիւր կանոնաւոր բանակի զինուորներով յարձակում կատարել լեռնականների առաջապահ պաշտպանական դիրքերի վրայ, գոռոզացել, որ լեռ բարձրացողներին վար կը բերէր, աքսորի կը տանէր: Միհր աստուած արեւն է եկել կանգնել կոռուղների դիրքերի վրայ, կարծես նախնիների կրակի աստուած «Ար-Արա»...ն էր թշնամու զինուորի վրայ հուր կաթում, բարձունքին նայողների ակները ճառագայթահարում: Մարտի ելած շինականները, արեւի ճառագայթները որպէս շանթեր նետում դէպի լեռան բարձունք յարձակուողների վրայ: Նրա պատնէշներին հակող շինական մարդիկ՝ նախնիների Անգեղաց Տորքի նման, ժայռեր գլորում դուշմանի զինուորի վրայ: Կրակ թշնամուն, առաջին փամփուշտը արձակել է Եօղունջուղից՝ Սարգիս Գապարեանը: Մինչեւ իրիկուն տեսած մարտում, թշնամու կանոնաւոր բանակի զինուորը չէր կարողացել նուաճել լեռնականների պաշտպանական բարձունքը, պարտուել էր թշնամին: Մահացածներին ու վիրաւորներին մարտի դաշտից հանելով, խալէտը նահանջի հրաման է արձակել: Կոռու ելած շինականները, սպաննել էին թուրքի յոխորտանքը:

Առաջին իսկ մարտում պարտուել էր դուշմանը, հայոց գէնքից, չէ՛հայոց ոգու գէնքերից, իրենց արիացի նախնիների ոգի, որ իրենց

ցեղին տանում յաւերժութիւն: Նրանք կոռուի էին ելել մահ պատճառելու դուշմանին, սպաննելու եւ ոչ թէ անմահանալու համար իմացել մահուան գնալու: Գազագել էր մարտի դաշտում կռիւր տանուել տուած դուշմանը: Լեռան մի ուրիշ տեղամասից, երկու հազար զինուորներով թշնամին նոր գրոհ կատարել լեռնականների Հաճի Հապապլի գիւղին մօտիկ «Պագաճ» դիտակէտի դիրքերին: Տասնըհինգ մարտիկների պահակախումբի քաջերը յախուռն դիմադրել են, բազում անգամներ թուաքանակով աւելի թշնամին որոշակի առաջխաղացում է կատարել: Շինականների օժանդակ մարտիկներով համալրուած պահակախումբը արեւաչէկ գնդակների տարափ տեղացել թշնամու առաջապահ ջուկատների վրայ, ստիպել դադարեցնել մարտը:

Մաւալուած մարտի տեղամասին մօտիկ՝ «Օմարէն Գիտէյն» վայրում, կատաղի ճակատամարտ էր տեղի ունեցել թշնամու դէմ: Աւելի ծաւալուն յարձակման անցնելու համար թշնամին կոռուի դաշտ է բերել թնդանթ, անընդհատ ռմբահարել շինականների հրացաններից բարձրացած ծուխի տեղանքները եւ ժողովուրդի բնակած վայրը: Լեռան պաշտպանների իւրաքանչիւր գարկին հետեւել էին դուշմանի թնդանթի ու արդիական գէնքերի համազարկերը: Այդ մարտում եւ պաշպանական կռիւների ընթացքում թնդանթների արձակած ռումբերը նական վնաս չէին պատճառել լեռնականներին: Վնասակերծել էին չպայթած արկերը, վառօդը օգտագործել դատարկ փամփուշտներ լիցքաւորելու: Ճակատամարտը սկսելուց մի քանի ժամ յետոյ անձրեւ է տեղացել, թրջուել էին կոռուղ մարտիկների հագուստները, սակայն, նրանց կոռուելու ոգին բացավառուել դարբինների փուքների առաջի կրակի վրայ ջրի շիթերով ահագնացած խարոյկի նման, կոռուի ու յաղթանակի աստուած՝ Վահագնի «Յարդագողի ձանապարհ»-ի աստղերի նման: Մուսաների լեռներ կռիւ եկած թուրքն էլ է թրջուել, սակայն լեռնականների հին նմուշի գէնքերը ու գինամբերը գրեթէ անգործածելի էին դարձել: Անձրեւը աղէտաբեր էր եղել նաեւ լեռան բարձունքներին սպաստանած ժողովուրդի համար: Նոյնիսկ այդ պայմաններում թշնամին անկարող է եղել լեռնականների պատնէշած դիրքերը նուաճել ու առաջխաղացում կատարել: Այդ կոռում դուշմանի գնդակից վիրաւորուել են երեք լեռնականներ, քաջի մահով ընկել երկու մարտիկներ, որոնցից Յակոբ Գարակէօզեանը (Ըլլէուն) մահն էր դիմաւորել քաջին վայել պատգամով՝ «Դուք ինձմով մի՛ գբարուէք, գագէ՛ք թշնամուն դիմադրեցէ՛ք»: Երիտասարդ, առիւծասիրտ մարտիկ մի տղայ, մացառուտների ու ժայռերի միջով ներքեւ սողալով հասել տափակ ժայռի վրայ տեղաւորուած թնդանթի: Մարմինը ծառի ճիւղերով դարանակալած, սպասել պատնէ առիթի, այնքան մօտիկ էր եղել, որ լսել է նրանց խօսակցութիւնը: Երբ թնդանթաճիգը իր տեսադաշտում է երեւացել, առաջին կրակոցով սպաննել նրան, յաջորդական էին կրակոցներով սպաննել միւս չորս պին: Անկարող են եղել նշմարել նրան, սարսափահար հրամանատար

ըր հրամայել թնդանթը տանել պատասպարուած վայր:

Լեռնականների կոռուի կորովը, արիութիւնը ստուգելու նպատակով դուշմանի առաջապահ վաշտերը մօտեցել էին լեռան պաշտպանական չորս տեղամասերին, որոնցից Տամլաճըգի կողմի յարձակումը ապարդիւն է անցել, բարձունքներից ժայռեր գլորելով՝ դուշմանին ստիպել նահանջել: Թշնամու ընդհանուր յարձակումը սկսել է լեռնականների չնախատեսած տեղանքներից, որոնց վաշտերը մի քիչ առաջանալուց յետոյ երկու խումբերի բաժանուել: Մէկ խումբը արշաւել է դէպի Թաթարարլանկ, իսկ միւսը արեւմտեան կողմից առաջանալով թափանցել անտառ: Նոյն եւ յաջորդօրը դուշմանի երեք հազար զօրքը եւ երեքից չորս հազար աւարառու խուժանը ինչպէղ կրակ տեղացել հայերի պաշտպանական դիրքերի վրայ: Թնդանթները անդադրում ռմբակոծել հրացաններից ժայթքած ծուխի կողմը: Մութ էր, կոռուի ու յաղթանակի հայոց աստուած Վահագնը մարել է աստղերի ու արեգակի լոյսը՝ սանձահարելու թշնամու յարձակումը, որի մի մասին միայն յաջողուել է Թաթարարլանկի արտերից անցնել ու մտնել անտառի եզերքը: Լեռնականները, նրանց հաւատքի ու մարգարէի հանդէպ անարգական հեզնանքներով, շարունակել են հանգիստ սրտով պաշտպանուել: Դուշմանը, տարագրուած երկու Քէպուկեցի լրտեսների առաջնորդութեամբ, առաջացել անտառի խորքերը, մօտեցել հիւղաւանին, գնդակոծել այն ու գորանոցը: Խուճապի է մատնուել հիւղաւանի ժողովուրդը: Հայ զօրականները յախուռն հակայարձակումով դուշմանին հարկադրել նահանջել, գերավարել նրանց առաջնորդած երկու հայերին, հրապարակաւ մահապատի ենթարկել նրանց: Այդ օրերի ճակատամարտերում գոհուել են ութը լեռնականներ, վիրաւորուել հինգը, որոնցից երեքը յետոյ մահացել: Պատնէշի վրայ կանգնած երկու յամառ լեռնականներ, շարունակել են դիմադրութիւնը, պաշարուելով սպաննուել: Քաջերից քաջ լեռնական Վանէս Գոճէնեանի (Յէնտը) մէկ փողանոց գէնքը ցուցադրել են Սուէտիա գիւղաքաղաքի փողոցներով, յայտարարել, որ այդ գէնքի տէրը մառնելուց առաջ հինգ զինուորներ էր սպաննել:

Հետախոյզները տեղեկացրել են, որ թշնամու զօրքը կիրճերում է, նուաճել մի շարք քարափներ եւ լեռների գագաթներ: Պաշտպանական այդ կարեւոր տեղանքներում լեռնականների միայն փոքրիկ խմբեր էին տեղակայուած եղել: Այդ առաջխաղացումները չէին շարունակուել, կեղծ յարձակումներ էին եղել: Այնուհետեւ, մեծաքանակ ուժերով մէկ կիրճի միջով գանգուածային յարձակում են սկսել, սպաննել էին հետախոյզներին, թափանցել կարեւոր մի լեռնանցք: «Պաշտպանական խորհուրդը» գնահատելով ռազմական իրադրութիւնը, տարբեր դիրքերից համախմբել է զօրական ուժերը: Դուշմանի համալուծումը բուռն գրոհ է սկսել դէպի լեռան բարձունքներ: Թուաքանակով նրանք շատ-շատ աւելի էին, նրանց գէնքերի հասողութիւնը գերազանցում էր լեռնականների գէնքերին: Մինչեւ իրիկունամուտ, դուշմանի երեք վաշտեր առաջ էին արժուել անտառի խիտ մացառուտների միջով, հասել հիւղաւանի խրճիթներից հինգ հարիւր մեթր հեռաւորութեան վրայ:

Խորը ու խոնաւ կիրճ էր հիւղաւանի ու դուշմանի վաշտերի միջեւ, գերադասել էին տեղաւորուել բաց օթեւանում, քան թէ յարձակումը շարունակել գիշերուայ մութին:

Լուսին չկար, մութ գիշեր էր, Աստղիկ Դիցուհին մշուշով պատել էր լեռան բարձունքները, որով մարել աստղերի աչուկները: Մթնել էր հիւղաւանը, մթնել էր Մուսաների լեռը: Ահա այդ գիշեր էր իրենց «Մահ կամ ազատութիւն» ժամը: «Պաշտպանական խորհուրդ»-ի մարդիկ ըմբռնել, որ ճգնաժամային վիճակի էին մատնուել: Փրկուելու միայն մէկ միջոց կար: Կէս գիշերուայ մթին սողակել թրքական դիրքի շուրջը, իրակաւանցնել շրջապատման օղակաձեւ շարժում, յանկարծակի ու միաժամանակուայ հրաճգութեամբ մօտենալ եւ անհրաժեշտութեան պարագային յարձակումը աւարտել ձեռնամարտի անսպասելի ընդհարումով: Եթէ, իրենց քաջի երթը ճախողէր, իրենց արեամբ թող սրբագործուէր հայրենաց լեռների հողը, ահա թէ նրանց համար ինչ էր նշանակում «Վան հայրենեացը»: Ինչ ճախողում, քաջին վայել է վահանը կուրծքին վերադառնալ տուն: Քարափներին ու մացառուտներին քաջատեղեակ լեռնականները արտակարգ հմուտութեամբ սողացել մութ ու խոնաւ անտառների միջով: Շրջապատումը աւարտուել էր, չէթէյական մի խմբի յանդուգն պետի՝ Եսայի Եղուկեանի «Հիւճիւմ» (գրոհ) կանչով լեռնականների գէնքերի միատեղ շաչիւններով յարձակում իրականացրել, քաջերը գրոհում էին, լեռան ձորերն էին ողջոյնում նրանց: Մի քանի վայրկեանների ընթացքում թշնամու շարքերում խուժապ էր առաջացել, նրանց ճամբարում ծայր աստիճանի խառնաշփոթութիւն էր, դուշմանի գինեալները շտապել էին գիշերուայ խաւարին այս ու այն կողմը փախչել, սայթաքել ժայռերի ու կոճղերի վրայով: Սպաները հակասական հրամաններ էին արձակել, ի գուր պայքարել զօրքին համախմբելու: Այնպէս էին տպաւորուել, որ հայերը շատ նկատելի յարձակում են կազմակերպել: Կէս ժամից յետոյ, դուշմանի գնդապետը նահանջի հրաման է արձակել, սուրը ու հողաթափերը թողնելով՝ փախել:

Արեւի այգեբացի առաջին ժպիտը աւետել է հայոց յաղթանակը, նրանց յաղթ սրտերին հուր կաթել: Հետապնդել են անտառում մոլորուած թուրքի զինուորներին, ոչնչացրել նրանց: Փրկութեան այդ կռում գոհուել են երեք քաջեր, վիրաւորուել չորսը, որոնց արիւնով սրբացել են լոյսի աստուած Ապոլոնի «Մուսա քոյրերի» պաշտամունքի լեռները: Մարտում, աւելի քան երկու հարիւր թուրք զինուոր է սպաննուել, ինչո՞ւ էին կոռուի եկել այդ լեռներ: Մարտիկ դարձած շինական Աբրահամ Արամայիսեան պիտի ասէր իր զգեստնած թուրք զինուորին՝ «չեմ սպաննում քեզ, ինչո՞ւ ես կոռուի եկել այս հեռու լեռներ, գնա՛ մանչերիդ, գնա՛ արդար քրտինքով վաստակած հաց տուր նրանց»: Եթէ Մաուգեր հրացաններ, երկու հազար հինգ հարիւր փամփուշտ եւ մի ջորի են ռազմի դաշտից աւար վերցրել: Ընդհանրապէս Մուսաների Լեռան դիւցազնամարտում, ըստ ոմանց յայտնածի, նուազագոյնը 600-700 զինուոր է սպաննուել:

ՆՇՈՒԵՑ ՀՈԼԻՎՈՒՏԻ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՅՈՐԲԵԼԵԱՆԱԿԱՆ 40-ԱՄԵԱՅ ՏԱՐԵՂԱՐՁ



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԻՒՄՐՈՅԵԱՆ

«Չորս տասնամեակներ են անցել այն օրուանից, երբ հիմնուեց եւ հանդիսաւորապէս օծուեց Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցին:

Ժամանակի ընթացքում եկեղեցու հոգեւոր սպասաւորները եւհասարակացեալ հայորդիք նորոգեցին եւ խնամքով պահպանեցին նուիրական աղօթաւայրը, որի օրհնեալ յարկի ներքոյ հաւատաւոր մեր զաւակները, զօրանալով երկնաւոր շնորհներով, ամրացան որպէս հոգեղէն եկեղեցի, որպէս տաճար Սուրբ Հոգու: «Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս (Հատուած հայրապետական կոնդակից)

Շուրջ չորս տասնամեակ հոգեւոր ու ազգային բացառիկ առաքելութիւն է իրականացնում Հովիվուտի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցին: Մեր համայնքում չկայ մի հայ, որի կեանքի ճանապարհները խաչուած չլինեն այս Ս. Տաճարի հետ, որովհետեւ տարիներ շարունակ այն եղել է հայութեան սիրո, ուրախութեան, աղօթքի ու սիրոյի կենտրոնը, հաւատքի տունը, որտեղից հոգեւոր անունը է ստացել մեր ժողովուրդը:

Եկեղեցու ու համայնքի հիմնադրման եւանսակարկ ծառայութեան քառասունամեայ տարեդարձի առթիւ 2014 թ.-ի Հոկտեմբերի 12-ին, «Տաղեան» Մշակութային կենտրոնում, եկեղեցու հոգաբարձութիւնը եւ «40-ամեակի» յանձնախումբը, հովանաւորութեամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի, կազմակերպել էին շքեղ յօբելեանական երեկոյ, որի պատուով նախագահուհին էր եկեղեցու հիմնադիրներէից պան Քեչոյեանի այրին՝ Ռոզ Քեչոյեանը:

Երեկոյթին ներկայ էին ազգային ու հոգեւոր առաջնորդներ, մեր համայնքի մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչները, Հայոց Եկեղեցու երախտաւոր զաւակները: Օրուայ հանդիսավարն էր յայտնի փաստաբանուհի Թամար Փոլադեանը: Ողջոյնի եւ բացման խօսքով հանդէս եկան եկեղեցու Հոգաբարձուներէի միութեան ատենապետ Յովհաննէս Դաւիթեանը եւ «40-ամեակի» յանձնախումբի ատենապետ, փաստաբան Արմէն Թաշճեանը: Երեկոյթին ներկայ պետական այրերից կոնգրեսական Արամ Շիֆը, Կալիֆորնիայի Ասաբլիայի անդամներ Ազրին Նազարեանը, Կատչո Աշաղջեանը, Լոս Անճելոսի քաղաքային խորհրդի անդամներ Փոլ Գրիգորեանը եւ

Միտչ Օֆարելը ներկաներին փոխանցեցին իրենց անկեղծ շնորհաւորանքներն ու մասնաւոր գնահատանքի գրութիւնները: Հանդիսութեանը ներկայ էին նաեւ Գալիֆորնիայի սենատոր Քեւն Դէ Լեոնի ներկայացուցիչ Պայծառ Թովմասեանը եւ Գալիֆորնիայի Ասաբլիայի անդամ Մայք Գաթթոնի ներկայացուցիչ Մերի Մանուկեանը: Եկեղեցու անցնող, փառապանծ տարիների համառօտ պատմութեան մասին պատմող ֆիլմը, պատրաստուած Յարութիւն Ֆողուլեանի եւ Արա Ահարոնեանի համահեղինակութեամբ, ներկաներին մտովի տեղափոխեց դէպի անցեալ՝ վերահանելով Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու ունեցած առանցքային, հոգեւոր ու ազգապահպան դերը եւ նշանակութիւնը, ինչպէս նաեւ ապագայի տեսլականը:

Հարկ է նշել, որ հանդիսութեան ընթացքում ներկաները ծանօթացան նաեւ եկեղեցու մօտալուտ վերաշինութեան ծրագրերին:

Եկեղեցու շուրջ քսանամփայ հովիւ, արժանապատիւ Ս. Մանուկ աւագ քահանայ Մարգարեանն իր շնորհակալական խօսքում անդրադարձաւ եկեղեցու պաշտօնէութեան նախաձեռնութեամբ մեկնարկած «Ես եմ հիմքը իմ եկեղեցու խորագրով», Ընտանիքների բարեկամութեան ծրագրին: Որպէս այդ ծրագրի սկիզբ՝ երեկոյթի ընթացքում պատուուեցին եւ համապատասխան յուշանուէրների արժանացան Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու հիմնադիրները, Գերաշնորհ Ս. Վաչէ արք. Յովսէփեանը, Գրիգոր Ալթունեանը, Սարգիս Տէր Սարգիսեանը, Արթո Փոլադեանը, Ջան Քեչոյեանի այրի Ռոզ Քեչոյեանը, Նազարէթ Գալաջեանի այրի Սիմա Գալաջեանը եւ որդի Ջաք Գալաջեանը, Սարգիս Սիմոնեանի որդի Բաք Սիմոնեանը: Երեկոյթին ներկայ էին հանգուցեալ հիմնադիրներից Կարո Մեղրիկեանի եւ Ռիչարդ Ասլանեանի ընտանիքները, որոնց նոյնպէս կը փոխանցուեն պատուոյ յուշանուէրները:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնութիւնը բաշխեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ, գերաշնորհ Ս. Յովհան արք. Տէրտէրեանը: Սրբազանն իր շնորհակալութիւնը յայտնեց նախկին առաջնորդ, գերաշնորհ Ս. Վաչէ արք. Յովսէփեանին, անցեալի ու ներկայի հոգեւոր սպասաւորներին՝ գլխաւորութեամբ եկեղեցու հովիւ, արժանապատիւ Ս.

Շաբ.բ էջ 18

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ



Սոյն թուականի Հոկտեմբեր 7-8 Սիէրա Մատրէի գեղատեսիլ «Մաթէր Տոլորոսա» վանական համալիրին մէջ տեղի ունեցաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի հերթական եկեղեցականաց համագումարը: Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովհան Արք. Տէրտէրեանի բարձր տնօրինութեամբ, եկեղեցականաց այս տարուան վերջին համաժողովը գուրդողուեցաւ հոգեւոր առանձնացումով մը, որ խոկումի, առանձնական աղօթքի եւ ընթերցանութեան բացառիկ առիթ մըն էր հովուական եւ վարչական գործերով բազմազբաղ մեր եկեղեցականներուն համար:

Առաւօտեան ժամերգութեանէն յետոյ բարեգալտեան եւ բացման ելույթով հանդէս եկաւ Գերշ. Ս. Յովհան Արք. Տէրտէրեան: Առաջնորդ Սրբազանը իր խօսքին մէջ մասնաւորաբար նշեց. «Հոգեւորականաց այս համախումբը դասարանային հաւաք մը չէ, այլ անձնական ներհանգրգողութեան եւ մեր եղբայրութեանը սնունդ տուող հրաշալի առիթ մը: Այսօր եւ վաղը ըմբռնենք այս առանձնացումը Մաթէր Տոլորոսայի խաղաղ եւ աղօթաբոյր միջավայրին մէջ: Բանանք մեր սրտերը Աստուծոյ եւ ջանք չինայնք յետադարձ ակնարկով մը քննելու մեր կեանքի ընթացքը: Ամրացնենք մեր կապը Աստուծոյ հետ, եռանդ տանք մեր հաւատքին եւ քրիստոնէական սիրով շողկապուած զօրացնենք մեր եղբայրութիւնը՝ ի սէր Սուրբ Եկեղեցու»:

Եկեղեցականաց ժողովներու պատասխանատու համակարգող՝ Արժ. Ս. Աւետիս Քհնյ. Աբովեան, որպէս ատենապետ ներկաներու ուղղութեան յանձնեց համագումարի օրակարգը եւ խնդրեց զայն հաստատել: Որպէս օրակարգի առաջին նիւթ՝ թեմիս բարեջան Առաջնորդ Յովհան Արք. Տէրտէրեան ներկայացուց իր տեղեկագիրը: Անդրադարձ կատարուեցաւ Սրբազան Հօր կատարած վերջին այցելութեանը Մայր Աթոռ Ս. Էջմիածին երկու յոյժ կարեւոր ժողովներու համար՝ Եկեղեցական ներկայացուցչական եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի: Առ ի տեղեկութիւն, Առաջնորդը հանգամանօրէն խօսեցաւ թեմէն ներս վերջին ձեռքբերումներու մասին, ի մասնաւորի՝ նոր կալուածներու, շինութիւններու եւ շինարարական աշխատանքներու: Յաւաքիկայ ծրագրերը շատ են ու բազմազան: Յեղապանութեան 100 ամեակի առիթով միջոցառումներն արդէն իսկ մեկնարկուած են եւ նոյն ձեւով անոնց շարքը պիտի շարունակուի մինչեւ 2015 թուական: Որպէս

գաղաթնակէտ ոգեկոչումներու եւ յիշատակութեանց՝ Ապրիլ 23-ին Ս. Էջմիածնի մէջ տեղի պիտի ունենայ նահատակաց սրբադասումը: Այս, ինչպէս նաեւ՝ Սեպտեմբեր 27-ին տեղի ունենալիք միւլտիմեդիա-թեմա պիտի կազմակերպէ ուխտագնացութիւններ: Յովհան Արքեպիսկոպոս իր գոհունակութիւնն ու ուրախութիւնը յայտնեց քահանայական գոյգ ձեռնադրութիւններու կապակցութեամբ: Թեմիս ուխտանուէր եկեղեցականաց դասին պիտի միանան Բրշն. Սարգիս Սրկ. Էյլէնճեան՝ Հոկտեմբեր 7-ին, եւ Բրշն. Մկրտիչ Սրկ. Քասախեան՝ յառաջիկայ Յունուարին: Այնուհետեւ, ընթացիկ եւ ապագայ ծրագրերու վերաբերեալ կարգ մը յանձնարարականներ տուաւ Առաջնորդը՝ յորդորելով հովիւները իրենց ուղղութիւնը յատկապէս սեւեռել երիտասարդական ծրագրերու վրայ, հաշուի առնելով այն հանգամանքը, որ 2015-ը Արեւմտեան թեմէն ներս «Երիտասարդաց Տարի» է:

Յաջորդիւ, որպէս գլխաւոր խորհրդածութեան նիւթ «Ս. Պատիկ Խորհուրդը» թեմայով զեկոյցներ ներկայացուցին Արժ. Ս. Աւետիս Քհնյ. Աբովեան, Արժ. Ս. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան եւ Արժ. Ս. Մանուկ Ա. Քհնյ. Մարգարեան: Ս. Պատիկ ուղղափառ բարոյագիտութիւնը եւ անոր դրսեւորումները ամերիկեան կեանքի այսօրուան համատեքստին մէջ ներկայացուց Արժ. Ս. Աւետիս Քհնյ. Աբովեանը: Որպէս նիւթի անմիջական շարունակութիւն, Արժ. Ս. Շնորհք Ա. Քհնյ. Տէմիրճեան խօսեցաւ Ս. Պատիկ աստուածաբանական հասկացողութեան մասին: Թեմիս ամբողջացուց Արժ. Ս. Մանուկ Ա. Քհնյ. Մարգարեան՝ պատմական ակնարկ մը կատարելով Ս. Պատիկ ծիսական-արարողական զարգացման, ինչպէս նաեւ՝ մեր կենցաղին մէջ տեղ գտած ժողովրդական այլազան սովորութեանց մասին: Ծաւալուած աշխոյժ քննարկումները առիթ ընձեռեցին խոր վերլուծութիւններու եւ եզրակացութեանց:

Հոկտեմբեր 8-ի առաւօտեան գումարուեցաւ եկեղեցականաց համաժողովի երկրորդ նստաշրջանը, որ սկսաւ միասնական աղօթքով եւ Առաւօտեան ժամերգութեամբ: Անցնելով օրակարգի նիւթերուն՝ քահանայ հայրեր հանդէս եկան ծիսական կեանքէն ներս իրենց յուզող կարգ մը հարցերով: Առաջնորդ Սրբազանի յորդորն էր ամէն պարագայի հաւատարիմ մնալ մեր եկեղեցուց հնաւանդ եւ սրբազան աւանդութեանց՝ տեղի չտալով ժողովրդի կամայականութեանց: Միայլ

Շաբ.բ էջ 18

ՊԱՏԿԵՐ ՄԸ ՄԵՐ ԱՆՅԵԱԼԵՆ

Մարունակուած էջ 6-էն

հայ պատուին իրենց հասկցած ձեւով:

Յիշատակներու ալպոմիս մէջ կան տակաւին ուրիշ պատկերներ "երզազին" Պէյրութէն, ինքզինք երգիչ դաւանող Չափրաստէն՝ որ Հայկական Գոլֆֆի բակին մէջ կամ Սուք Սըրսոքի ճամբու եզերքին գործող իր բացօդեայ խանութին

առջեւ գուարճութեամբ կը գոհացնէր ներկաները իր բնածին բայց անմարգ սփրանտներով.....:

Տազնապ, մտահոգութիւն եւ անհանգստութիւն պատճառող դէպքերով լեցուն մեր ներկան յոյսով եմ որ պահ մը մոռացութեան կ'ենթարկուի դիտելով պատկեր մը մեր անցեալէն, սփիւռքի սիրտ կոչուող հայաբոյր հին ու նոր Պէյրութէն:

ՓԱՌՔ ՀԱՅՆՈՅ ԶԵՐՈՍՆԵՐՈՒՆ

Մարունակուած էջ 6-էն

պարզեցեցին մեր պատմութեան էջերուն:

Բ.- բարոյական- հոն կար ոգի: Ազատասիրութեան, անմահութեան եւ վրիժառութեան գաղափարականը հաճընցիները վերածած էր մէջ մէկ արծիւներու, որոնք կը ձգտէին սաւառնիլ, ճախրել ազա՛տօքն, հպա՛րտօքն, հա՛յօրէն: Այդ ոգին է որ չկարողացան սպաննել հաճընցիին մէջ: Այդ ոգիով է որ սերունդներ կերտուեցան այս անգամ ոչ թէ Հաճընի կածաններուն եւ կիրճերուն մէջ, այլ՝ աշխարհով մէկ՝ ուր հաճընցիներու շառաւիղներ ընձիւղուեցան աստ եւ անդ:

Այդ ոգին հունտերն էին, որոնք ուռճացան հայրենի հողին վրայ Արեւելեան Հայաստանի Նոր Հաճըն աւանին մէջ: Անոր արձագանգներն էին որոնք լսուեցան դարաբաղեան մարտերու ընթացքին՝ երբ հաճընցիի վճռակամութեամբ այս անգամ հայր արժանի եւ մահացու հարուած տուաւ թշնամիին: Այդ ուղիին են հաւատարիմ Հաճնոյ տարտղուած

այն գաւակները, որոնք Լիբանանէն մինչեւ ԱՄՆ ու Գանատա, Հարաւային Ամերիկայէն մինչեւ Ֆրանսա ու Հայաստան խորին ակնածանքով կ'ոգեկոչեն իրենց մեծ հայրերուն հերոսական սիրանքը: Այդ ոգին է որ չի պոկուիր սերունդներու յիշողութենէն եւ դաստիարակութենէն, կը մնայ անկողապտելի արժէք՝ ինչքան ալ թաւային տարիներ ու տասն-ամեակներ:

Ի տարբերութիւն հասարակ մահկանացուներու, հերոսները կը վայելեն չեւ-մահու այն պատիւն ու յարգանքը, որ վայել է սոսկ քաջարիներուն: Գիտակից նահատակութեամբ մահը զգեստելու անվեհերութիւնը քիչերու բաշխուած շնորհք մըն է. անոնք օտուած կ'ըլլան գերմարդկային արժանիքներով՝ որովհետեւ կ'ապրին վաղուան համար, պատմութեան համար, յաւերժութեան համար:

94 տարիներ առաջ արժուերոյն Հաճնոյ մէջ ինկած հերոսները լուսասփիւռ ուղին հարթեցին անմահութեան:

Փա՛ռք Հաճնոյ անմահ հերոսներուն:

ՀՈՒԿՈՒՄԻՍԻ Ա. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ

Մարունակուած էջ 17-էն

Մանուկ աւագ քահանայ Մարգարեանի: Տէր հօր ծառայութեան տարիներին եկեղեցին արձանագրել է աննախնթաց յաջողութիւններ՝ բարեկարգելով եւ ընդարձակելով եկեղեցու տարածքներն ու ձեռնարկելով տաճարի շինութեան հիմնովին վերակառուցումը: Այս յոբելանական առթիւ, ինչպէս նաեւ, ի նկատի ունենալով Տէր Մանուկ աւագ քահանայ Մարգարեանի հոգեւոր ու ազգային անմնացորդ ծառայութիւնները, շնորհեց նրան առաջնորդանիստ Ա. Ղեւոնդեանց Մայր Տաճարի «Աւագ Կնքահօր» պատուաւոր կոչում, ինչպէս նաեւ ներ-

կաներին տեղեկացրեց, որ 2015 թ.-ի Փետրուարին 8-ին նախատեսուած է Տ. Մանուկ աւագ քահանայ Մարգարեանի յոբելանական տարեդարձի եւերկարամեայ հոգեւոր ծառայութեան մեծարմանը նուիրուած համագաղութային ձեռնարկ:

Պաշտօնական աւարտի վերջաւորութեանը շուրջ հինգ հարիւր ներկաների երգեցողութեան ներքոյ կտրուեց յոբելանական թխուածքը:

Շնորհաւոր տարեդարձը, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի, թո՛ղ որ քո Սուրբ Յարկից ճառագող աստուածային լոյսը տարածուի մեր ժողովրդի վրայ՝ առաջնորդելով դէպի բարին, ազնիւն ու յաւիտենականը:

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Մարունակուած էջ 17-էն

ընկալումները, թիւրիմացութիւնները եւ եկեղեցւոյ ուսուցումներուն հետ բնաւ կապ չունեցող, յետամուտ սովորոյթները կարելի պիտի ըլլայ ի սպառ արմատախիլ ընել միայն սիրով, քրիստոնէական դաստիարակութեամբ, կրթութեամբ եւ հայրական խրատով: Հետեւաբար, Առաջնորդ Սրբազա-

նը յանձնարարեց աւելիով զարկ տալ կրթական-քարոզչական աշխատանքներուն՝ մեր ժողովրդի գաւակներուն հոգեւոր սնունդով ջամբելու համար:

Միասնական ճաշէն ետք, Գրչն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան իր փակման խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց թեմի եկեղեցականներուն իրենց մասնակցութեան համար:

ԱՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՄՈՐՍՈՔՆԵՐ

Մարունակուած էջ 15-էն

Թիւն մըն ալ, թէ՛ «Հայու հանճարը ստեղծած է այս բոլորը եւ թուրքը կործանած է զանոնք»: Այլ խօսքով՝ հայը ստեղծող է, թուրքը՝ կործանող: Նաեւ՝ գեղծարար:

Ուստի, կէսօրուայ ճաշէն ետք ցտեսութիւն կ'ըսենք եւ միտիթարութիւն կը մաղթենք միշտ սուգի ու լացի մէջ եղող մեր տխրաղէմ եւ սիրելի Անի քաղաքին, յուսալով եւ հաւատալով որ, պիտի գայ օր մը երբ այլեւս անոր արցունքները պիտի դադրին, գլխուն կարմիր մահիկը գետին պիտի նետէ, իր սեւ լաշակն ու զգեստը պիտի թօթափէ եւ Կարսին հետ եղբայրաբար ձեռք ձեռք բռնած հայկական շուրջպար պիտի պարեն Արարատի սէզ լանջերուն վրայ:

Ապա Կարս կը վերադառնանք եւ կ'այցելենք անոր պատմական նշանաւոր թանգարանը, որու հետեւեալ հնամենի իրերը իսկապէս ուշագրաւ էին, ուսանելի, եւ անոնց ձեռքբերումն ու ապահովութիւնը խիստ գնահատելի եւ քաջալերական:

. Trinosaur-ի մը նկարը եւ ոսկորը: 6 մէթր երկարութիւն ունեցող կենդանի մը որ ապրած է 6 միլիոն տարի առաջ (այս բառը բառարաններուն մէջ չկայ: Հաւանաբար dinosaur ըսել կ'ուզեն, որ կը նշանակէ մողէց):

. Քարեր Ք.Ա. 25.000-10.000 դարերէն: Նաեւ հողէ, այլազան քարերէ ու պղինձէ ամաններ Ք.Ա. 3000 թուականներէն:

. Հագուստեղէններ, երաժշտական գործիքներ, օղակներ, սուրբեր, գէնքեր, դանակներ եւ ամաններ:

Արաբերէն ձեռագիրներ, գիրքեր, թուրքեր եւ Գուրաններ:

Թանգարանէն դուրս գալով կ'ուղղուինք օղակայան ուր կը հասնինք տասր վայրկեանէն: Մուտքի ձեւակերպութիւնները կ'ընթանան շատ արագ եւ առանց որեւէ դժուարութեան: Օդանաւը կը մեկնի կ.է. ժամը 5:15-ին եւ ճիշդ երկու ժամ վերջ, 7:15-ին կը հասնինք Պոլիսի օդակայանը, ուր խումբին անդամները ջերմօրէն կ'ողջագուրուին եւ իրարու բարի ճանապարհ մաղթելով կը բաժնուին իրարմէ, իւրաքանչիւրը ուղղուելով դէպի նախապէս իրենց ապահոված պանդոկները: Ահա այսպէս, Որբաթ 4 Հոկտեմբեր 2013-ին, երեկոյեան ժամը 7:15-ին, պաշտօնապէս կը վերջանայ մեր պատմական խիստ յիշատակելի եւ անմոռանալի ուխտագնացութիւնը՝ հանգիստ, ապահով, կատարեալ յաջողութեամբ եւ մեծ գոհունակութեամբ ու ուրախութեամբ:

Փա՛ռք Աստուծոյ: Շնորհակալութիւն մասնագէտ եւ փորձառու կազմակերպիչ՝ Արմէն Արոյեանին, իր արժանի օգնական եւ փորձառու քարտուղարուհի՝ տիկին Անի Քահ-բէճեանին: Յետեւութիւն, օր մը կրկին տեսնուելու յոյսով նոյն նպատակին համար, եւ մանաւանդ, նոյն խումբին եւ նոյն բարի եւ փորձառու շարժալար՝ Սելճուգին հետ:

Իսկ ինչպէս կարելի է արժեւորել մեր այս յիշատակելի ուխտագնացութիւնը ընդհանուր առմամբ:

Անիկա լիուլի եւ ամբողջութեամբ կը համապատասխանէ (գոնէ ինծի համար), Պարսկահայ գրող՝ Ռուբինա Փիրումեանի ուխտագնացութեան հետեւեալ այնքան դիպուկ եւ բառ առ բառ ճշգրիտ հոգեւոր ապրումներուն եւ մտածումներուն.

»Ուխտագնացութիւն մը որ իմ քայլերս պիտի ուղղէր դէպի իմ ժողովրդի սրբապղծուած վանքերն ու եկեղեցիները, դէպի աւերակները բնութեան հրաշալիքներու գրկում թաղուած երուս գիւղերի ու ավանների, որոնց կենդանի ու վառ նկարագրութիւնները, Յեղապանութիւնը վերապրած հայի կարօտակէզ յուշերում տրոփող, ապրում են իմ գրականութեան մէջ, արձագանգում են դեռ արդարութեան ձգտող, դեռ չապիացող վէրքի մորմոքը կրող երկրորդ ու երրորդ սերնդի ստեղծագործութիւններում«: Դէպի Կիլիկիա եւ Արեւմտեան Հայաստան ուխտագնացութիւն կատարած ունէ ճշմարիտ հայ, չի կրնար բառ առ բառ եւ հարիւր առ հարիւր համաձայն չըլլալ եւ ամէն չըսել Ռուբինա Փիրումեանին, իր այս այնքան սրտակեղէք եւ մտայտց ապրումներուն եւ վերլուծումներուն:

Կ'արժէ նաեւ լրջօրէն խորհիլ բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանի »Ճամբորդութիւն« բանաստեղծութենէն առնուած հետեւեալ խորիմաստ խօսքերուն մասին. »Եւ եթէ յանկարծ քո ճանապարհին, նախապապերիդ դու չհանդիպես, ուրեմն սխալ ճամբով ես գնում եւ ոչ մի հրաշք չի փրկելու քեզ«:

Ուրեմն, այս կարճ կեանքի ընթացքին, որպէս հայ, եթէ իսկապէս չենք ուզեր սխալ ճամբայէ ընթանալ եւ կորսուել, մենք բոլորս ալ անխտիր եւ առանց բացառութեան, անպայման հանդիպելու ենք մեր նախնիքներուն: Եւ մեր նախնիքներուն հանդիպելու լաւագոյն ձեւերէն մէկը, գոնէ մէկ անգամ - եթէ ոչ աւելի - երթալ է Կիլիկիա, Արեւմտեան Հայաստան, եւ... այո՛... մինչեւ Տէր Զօր, հետեւելով անոնց արիւնաբոյր եւ սրբալոյս հետքերուն:

Երանի թէ՛ Մեծ Եղեռնի 100-ամեակի առիթով, ասիկա ըլլար իւրաքանչիւր հայուն գլխաւոր որոշումը, ինչ որ հաւանաբար, պիտի ըլլար լաւագոյն ձեւերէն մէկը գիւրենք յիշելու եւ յարգելու իրենց սուրբ, անմահ եւ անթառամ յիշատակը եւ սրբազան կտակը:

Ուրեմն, տար Աստուած որ, Մեծ Եղեռնի սեմին, հետեւեալ այնքան խորիմաստ եւ աւուր պատշաճի խօսքը ըլլայ գանգ, արձագանգ եւ ասագանգ, իւրաքանչիւր հայու համար:

- Դուն չես գիտեր ո՛ր կ'երթաս, մինչեւ չգիտնաս ուրկէ կու գաս...

Ո՞վ հայ, լսեցի՛ր...Արդեօք գիտե՛ս թէ ուրկէ՛ կուգաս եւ ո՛ւր կ'երթաս...

Չանգեր, դողանջէք...

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մի ոմն գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը \$100 տուար կը նուիրէ անոր քարգաւաճման ֆոնտին:

SAVE THE DATE

AMAA-Haigazian University Celebratory Banquet in honor of Dr. Mihran Agbabian and George R. Phillips, Esq.; Saturday, November 15, 2014, 6 pm, Beverly Hills Hotel, \$200; Information: Julie Aharonian 818-368-5266; Katia Kermoyan 818-242-5064.

ԱՊՈՒԲԻՍԱՆ ՄԱՂԹԱՆԵ

Մասնաթիւր շէնթիւն ԱՆԱՍԵԱՆ շրջանէ մը ի վեր հիւանդանոցային դարմանումներու ենթարկուելէ ետք վերջերս տուն վերադարձած է կազդուրման համար: «Մասիս» շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթէ թերթիս աշխատակիցին եւ անուանի երաժշտագէտին:

ՄԱՐԱԶԴ



ՆԱԶԱՐԷԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ (1943 - 2014)

Դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ եղբոր, հօրեղբոր, քեռիին եւ ազգականին, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, Հոկտեմբեր 17, 2014-ին:

Յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, Հոկտեմբեր 22, 2014-ին:

Սգակիրներ՝

- Քոյրը՝ Խանըմիկ Մանուկեան-Տէր Դաւիթեան
- Քերայրը եւ քոյրը՝ Տէր եւ Տիկին Ստեփան եւ Էլիզ Թիւթիւնճեան
- Քերայրը եւ քոյրը՝ Տէր եւ Տիկին Յարութ եւ Սօսի Տէր Սարգիսեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկին Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան եւ զաւակները՝ Ռազմիկ եւ Արագ
- Քրոջ դուստրը՝ Տէր եւ Տիկին Փոլ եւ Լենա Աշճեան եւ զաւակները՝ Աբօ եւ Ալին
- Քրոջ որդին՝ Տօթ, եւ Տիկին Վիգէն եւ Թինա Թիւթիւնճեան եւ զաւակները՝ Թալիա եւ Վանա
- Քրոջ որդին՝ Տօթ, եւ Տիկին Սերժ եւ ձէքի Թիւթիւնճեան
- Քրոջ դուստրը Տէր եւ Տօթ, Տէյվիտ եւ Գարոլ Վալաձի եւ զաւակները՝ Վիեննա եւ Քաթիա
- Քրոջ դուստրը՝ Տօթ, եւ Տօթ, ձոնի եւ Գարլա Մէթոս եւ զաւակները՝ Սթեյլա եւ Լուքա
- Հօրեղբորորդին՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Արփի Տէր Դաւիթեան եւ զաւակունք
- Հօրեղբորորդին՝ Տէր եւ Տիկին Աւետիս եւ Ջարուհի Տէր Դաւիթեան եւ զաւակունք
- Եւ համայն Տէր Դաւիթեան, Մանուկեան, Թիւթիւնճեան, Տէր Սարգիսեան, Անթեպլեան, Մինակոսեան, Աշճեան, Երէցեան, Վալաձի, Մէթոս, Պրէյտի ընտանիքներ ու հարազատներ:

Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայ Ինքնութեան հիմնադրամին, NSCA Armenian Identity Endowment Fund (815 E Colorado Blvd. #140 Glendale, CA 91205)։

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՆԱԶԱՐԷԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը, իրենց խորագոյն վոչտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն, մասնաւորաբար եղբոր՝ Թերթիա աշխատակից՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեաններուն:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՆԱԶԱՐԷԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆի վաղահաս մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար ՆՄՄՄ-ի ատենապետ՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեաններուն:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

րելի ջահերու շտեմարան՝էն:»
 Աւետիսեան վարժարանի բացման առիթով, Նախագահ Սարգսեան պարգևատրեց Պրն. Էտուրտ Աւետիսեանը Մովսէս Խորենացի Նախագահական Մետալով՝ անոր մատուցած այս բացառիկ բարերարութեան համար: Հանդիսութեան ընթացքին, Տիկին Բամելա Աւետիսեան դպրոցին իր նուիրած դաշնամուրին վրայ նուազեց երկու երաժշտական կտորներ, որոնք ինք յօրինած եւ նուիրած էր Աւետիսեան վարժարանին:

Օրուան ընթացքին տեղի ունեցան նաեւ այլ ժապաւէն կտրելու արարողութիւններ դպրոցի

տարբեր բաժիններուն մէջ, որոնց բարերարները ներկայ էին վարժարանի բացման հանդիսութեան:

Օրուան հանդիսութիւններու աւարտին տեղի ունեցաւ շքեղ ճաշկերոյթ մը, որուն ընթացքին Պրն. Մերոնեան իր շնորհակալութեան խօսքը ուղղեց 220-է աւելի ներկաներուն, զնահատելով վարչական Խորհուրդի անդամներուն եւ բարերարներուն կատարած բացառիկ գործերը: Փառոս երաժշտական համոյթը որ բաղկացած է անիւսթոնի վրայ հաշմանդամ անդամներէ, ներկայացուց բացառիկ համերգ մը Կոմիտասի ստեղծագործութիւններէն եւ այլ հոգեւոր երգերէ բաղկացած:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ Կարապետ Եղաբեկեանի մահուան տխուր առիթով Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը կու գայ յանուն բոլոր կիլիկեանցիներուն, իր խորագոյն ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի այրին, Տիկ. Իւղաբերին, զաւակներուն Տօթ. եւ Տիկ. Ռուբէն Եղաբեկեանին, Տօթ. եւ Տիկ. Յարութ Եղաբեկեանին, թոռներուն, հարազատներուն եւ համայն բարեկամներուն ու զաղափարի ընկերներուն:

Կարապետ Եղաբեկեան, բարեհամբոյր խառնուածքով ու ազնիւ նկարագրով տիպար անձնաւորութիւն մըն էր, նուիրեալ հայրենասէր մը եւ հասարակական աննկուն գործիչ մը:

Հիւսուածեղէնի արտադրութեան մէջ մասնագիտացած էր ինքնաշխատութեամբ, Հալէպի մէջ առաջին անգամ ըլլալով կը հաստատեց ցամքոցներու եւ անձեռոցներու իր սեփական գործարանը:

Կանուխէն մուտք կը գործէ Հալէպի հայկական գաղութի հասարակական կեանքէն ներս, կ'անդամակցի Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան եւ մի քանի շրջան կը վարէ անոր վարիչ Մարմնի ատենապետութիւնը:

Երկար տարիներ կը վարէ Կիլիկեան Շրջանաւարտից Միութեան ատենապետի պաշտօնը, ապա դարձեալ երկար տարիներ կը ծառայէ Հ.Մ.Մ.ի վարչութեան ներս որպէս գանձապահ:

Ան կը հանդիսանայ Կիլիկեան ձեռնարանի հիմնադիրներէն մին, որպէս տուեալ հաստատութեան հոգաբարձութեան անդամ, ապա ատենապետ մինչեւ փոխադրուիլը Լոս Անճելոս:

Ան նաեւ անդամակցած է Ն.Ս.Մ.Մ.ին եւ Հ.Բ.Ը. Միութեան արժանանալով վեթերան անդամի կոչումին:

Ան իր հաւատարմութեան եւ հետեւողական բժախնդիր նուիրութեամբներու շնորհիւ արժանացած է բարձր գնահատագրերու եւ կոչումներու, ստացած է Վեհափառ հայրապետի օրհնաբեր կոնդակը գնահատանքի, սփիւռքահայրութեան Մշակութային կապի Կոմիտէի ոսկէ մետալը, Ս.Գ.Հ.Կ.ի վեթերան ղեկավարի կոչում եւ այլն:

Կարապետ Եղաբեկեանի քաղցր յիշատակը անթառամ պիտի մնայ իր հարազատներուն ու բարեկամական լաջն շրջանակի սրտերուն մէջ: Թող Աստուած անոր հոգին երկնային Արքայութեան լոյսերուն մէջ հանգստացնէ:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ Յովսէփ Ասատրեանի մահուան առիթով փոխան ծաղկեպսակի եղած են հետեւեալ նուիրատուութիւնները (Հ.Մ.Մ.) Հայ Մարմնամարզական Միութեան:

Տէր եւ Տիկ. Տօթ. Համբիկ Սարաֆեան	\$100
Տէր եւ Տիկ. Տիգրան Սարաֆեան	\$100
Տէր եւ Տիկ. Պօղոս Սարգսեան	\$100
Bohikian Medical Group	\$100
Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան	\$100
Տէր եւ Տիկ. Պենոն Կարապետեան	\$100
Տէր եւ Տիկ. Յովիկ Լաչինեան	\$100
Տէր եւ Տիկ. Գալուստ Տէրտէրեան	\$100
Տէր եւ Տիկ. Յակոբ Կիւտէշեան	\$100
Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան	\$100
Տիար Նազարէթ Աջապահեան	\$100
Սահարա ճաշարան Գրիգորեան եղբայներ	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Գոճապապեան	\$100
Տէր եւ Տիկ. Կէրի Սինանեան	\$100
Ս.Գ.Հ.Կ. «Արսէն Կիտուր» Մասնաճիւղ	\$100

ԱՆՄԱՌ ՓԱՌՔԻ ՆԵՐՐՈՂ

Շարունակուած էջ 16-էն

վիրաւորուել 190, ըստ ուրիշներին հազար ու նոյնիսկ աւելի:

Թշնամին, տարբեր դիրքերից, նորէն սկսել է յարձակուել, տեղի են ունեցել կատաղի մարտեր, սակայն ոչ նման գիշերային այն կուռին: Դիտարկման մի վայրից ժալոսակները գլորել լեռան գահաւէժ կողմ ի վեր յարձակման փորձ կատարող դուշմանի զինուորի վրայ, կործանարար վնասներ պատճառել նրան: Կուսակցով լեռնականների վառօդի ու փամփուշտների նուազիլը, վիրաւորական կոչերով առաջարկել յանձնուիլ: Նաեւ իրագրէկ լինելով, որ լեռան պաշտպանները աննդի քիչ պաշար ունէին, թշնամին նոր մարտավարութիւն է մշակել: Յաջորդ մի քանի օրերին հաւաքագրել են բազմաթիւ մղոններով շառաւիղի թուրք բնակչութեան տասնըհինգ հազարանոց աւարառու Տրոսակախումբ, պաշարել լեռը, սովամահութեան սպառնալիքով նրանց հարկադրելու անձնատուր լինել: Լեռան լանջերին եւ

գիւղերի բլուրների վրայ պատնէշներ էին կառուցել, արգելելու գիշերները գիւղերի շրջակայ պարտէզներից ուտելիք հայթայթել: Սակայն, խիզախ ու անվախ մարդիկ շարունակել են գիշերային երթերով պարտէզներից ուտելիք բերել:

«Պաշտպանական խորհուրդը» օգնութեան համար ձեռնարկել է Հալէպի Ամերիկեան Հիւպատոսին, Պօղոս Նուպար Փաշային եւ Հայոց Առաջնորդարանին նամակներ յղել: Խաչեր Ազապեան յանձն է առել այն Հալէպ հասցնել, սակայն կէս ճանապարհից ետ վերադարձել: Փորձել են յոյների միջոցով այն ուղարկել, երեւի հասցեատէրերին չէին հասել: Ենթադրելով, որ լեռան հիւսիսային կողմի Ալեքսանդրէթ նաւահանգստում բարեկամ երկրի ռազմաճակատ կարող էր խարսխած լինել, փորձել էին երիտասարդ լողորդի միջոցով անգլերէնով գրուած մի հաղորդագրութիւն ուղարկել: Երիտասարդը սպարդիւն վերդարձել էր, նաւահանգստում ռազմաճակատ խարսխած չէր եղել: (Շարունակելի)

ԶՈՒՑԵՐԻԱՑԻ ՄԵԾ ՀԱՅԱՍՏԻ ԵԱԳՈՊ ՔԻՆՑԼԵՐ

Շարունակում էք 15-էն

բազմաթիվ գոհասեղաններուն վրայ:

Ահա ահա, այս անգամ տեսարանին ակամայ ականատեսն է որ կը դառնայ Եազոպ Քիւնցլեր: Եւ ամենաահաւորը սակայն, ուղղակի անտանելին, անկարողութիւնն է. ունենալ ամբողջապէս ընդարմացած ըլլալու զգացումը՝ կարենալ ոչինչ ընելու: Չարիքը վերացնելու փոխարէն, դատապարտուած ըլլալ զայն ծանր կաշկանդումով մը դիտելու, առանց կասեցնել կարենալու անոր կործանարար մոլուցքը:

Հակառակ այս ամէնուն, Եազոպ Քիւնցլեր իր տիկնոջ՝ Էլիզապէթի հետ Ուրֆայի գուլիցերիական հիւանդանոցը քանի մը տասնեակ կիներու եւ երեխաներու համար կը դարձնէ փրկարար ովասիս մը, անոր յարկին տակ պահելով դժոխքի բովէն պոկուած այդ խլեակները, տրամադրելով անոնց խնամք, սնունդ եւ այն ամէնը ի սակաւէ անտի գորս ունէր:

Սակայն ամենամեծ ներդրումը, արդարեւ պիտի ուզէի ըսել՝ հերոսական արարքը գուլիցերիացի այս մեծ բարեգործին, ու թ հազար որք երեխաներու փոխադրումն էր մահուան ստուերին ընդմէջէն դէպի լոյսը կեանքին եւ փրկութեան: 1922 թուականին Եազոպ Քիւնցլեր իր տիկնոջ եւ քանի մը այլ օգնականներու հետ, «Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան» շանձնարարութեամբ, կը ստանան Կիլիկիոյ տարածքէն դէպի Սուրիա եւ Լիբանան՝ Ֆրանսական հովանաւորութեան տակ գտնուող աւելի ապահով երկիրներ տեղափոխել հայ մանուկներու այդ թշուառ մնացորդացը:

Այնուհետեւ, 1923-1929 թուականներուն, Եազոպ Քիւնցլեր ամբողջապէս կը նուիրուի որբախնամութեան գործին, եւ կը վարէ Պէյրութէն շուրջ 30 քմ. հեռավորութեան վրայ դէպի հիւսիս, Լիբանանի լեռներուն մէջ գտնուող Ղազիր աւանի որբանոցը: 1929-1931 թուականներուն ան կը դառնայ «Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան» վստահելի աշխատակիցներէն մին, եւ Պէյրութի ծովափնեայ շրջաններուն մէջ հաստատուած հայ ապաստաններու ճամբարներուն մէջ, հարիւրաւոր կարօտեալ այրիներու եւ երեխաներու համար իր տիկնոջ հետ օրական ձրիաբար կը բաշխէ սննդեղէն եւ կը մատակարարէ կերակուր:

Եազոպ Քիւնցլեր իր մահկանացուն կը կնքէ Ղազիրի մէջ 15 Յունուար 1949-ին: Իր մահէն երկու տարի առաջ՝ 1947 թուականին, Պագէլի համալսարանը զինք կը պատուէ՝ իրեն շնորհելով բժշկական «Պատուոյ Տոքթոր»-ի կոչում, իսկ Լիբանանի կառավարութիւնը յետ մահու՝ 1971ին կը պարգևատրէ Լիբանանի Պետական Արժանեաց Շքանշանով:

Ահա ահա, կեանքի համեստագոյն պայմաններէ եկած այս պարզունակ գուլիցերիացի բարեգործը, իր աննահանջ նուիրումով, անխնայ ծառայութեամբ դէպի կարօտեալ, զրկուած, անիրաւուած, հալածուած եւ ի վերջոյ մահուան դատապարտուած հայը, չիտատակիր արժանի մեծ գործ մը կը թողու հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ: Դարաշրջանի մը ամբողջ արհաւիրքը

վերապրած հայութեան զաւակները ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, բայց նաեւ առանձնապէս Լիբանանի մէջ, երախտագրութեան անմեռ զգացումներով զինք պիտի յիշեն յաւիտեան:

Եազոպ Քիւնցլեր հեղինակ է բազմաթիվ մենագրութիւններու, պատմուածքներու եւ վկայութիւններու, որոնցմէ կարեւորագոյննե-



Քիւնցլեր ընտանիքը, ճախէն առաջինը Ռօզա Ալիստոբանն է՝ որդեգրուած Քիւնցլերներուն կողմէ 1919/1920

րէն կարելի է սեպել զոյգ մը հրատարակութիւններ, թարգմանուած նաեւ արեւելահայերէնի՝ Դորա Սաքայեանի եւ Էլիզինա Մակարեանի աշխատանքով: Ահա ահա այդ հատորներուն խորագիրները. «Երեսուն Տարի Ծառայութիւն Արեւելքում», Երեւան, 2008, նաեւ՝ «Արեւան Եւ Արցունքի Երկրուն», Տպարտութիւններ Միշտգետքից Աշխարհամարտի Տարիներին, 1914-1918», Երեւան, 2011:

Ստորեւ թարգմանաբար կը ներկայացնեմ Եազոպ Քիւնցլերի գրչին պատկանող պատմուածք վկայութիւնը Հաճընի եւ հաճընցիի մը կեանքի պատմութենէն:

ՀԱՅՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ(2)

Եազոպ Քիւնցլերէն՝ Պէյրութի Փոքր Ասիոյ Տաւրոսեան լեռներուն մէջ կը գտնուի փոքրիկ քրդաբաղաք Հաճընը: Աշխարհամարտէն առաջ անոր բնակիչները մեծաւ մասամբ հայեր էին: Ասոնց մէջ կ'ապրէր խաղաղ եւ աշխատասէր Յովակիմը, որ մասնագիտութեամբ արհեստաւոր մըն էր: Ան ունէր մեծ ընտանիք, սեփական տուն, այգի եւ մարգագետին մը: Բայց լաւագոյնը՝ ան ունէր անասան հաւատք մը աստուածային սիրոյ եւ սնօրինութեան վրայ:

Քանի որ ան ի վիճակի չէր փոքր տառերով կարգալու, ատենին կրցած էր իրեն համար ճարել մեծատառ Աստուածաշունչ մը, որ իր առաջնորդող աստղն էր: Դեռ եւս 1895 թուականին, երբ թուրքերը արիւնահեղութիւններ տրագործեցին հայոց մէջ, ան ճանչցաւ զԱստուած, որուն վրայ դրաւ իր ամբողջ վստահութիւնը:

Նախապէս տարբեր եղած էր: Իր երիտասարդ տարիքին ան հետեւած էր սխալ ճամբաներու: Բայց իր դարձէն քիչ մը ետք, եկաւ ժամանակը երբ ան արժանացաւ «գտնելու», յայտնաբերելու երջանկութիւնը, որ ամենաբարձրն է: Այսպէս, ան միացաւ բողոքական համայնքին, եւ շուտով այնտեղ դարձաւ հաւատարիմ եւ սիրուած սարկաւազ մը:

Սակայն ետքը Համաշխարհային Պատերազմը սկսաւ: Մինչ այդ, իր երեք որդիներն ու երեք դուստրերը չափահասներ դառնալով, բա-

ցի կրտսերէն, ամուսնացած էին: Բայց այս կրտսեր որդին մեծ մտահոգութիւն կը պատճառէր իրեն, քանի որ ան յեղափոխականներուն միացած էր:

«Ինչո՞ւ համար պարզապէս թոյլ տալ որ թուրքերը մեզ սրախողխող ընեն», կ'ըսէր պատանին, եւ փոխանակ ինչպէս ուրիշ հազարաւոր հայեր որոնք թուրքերու կողմը կը գինուորագրուէին, ան դէպի լեռները փախաւ, ուր նաեւ

Տարագրութեան ճամբուն նաեւ իր չարչարակից ուղեկիցներուն ան միշտ կը կարողար այդ Աստուածաշունչէն: Մինչ տարագրութեան այդ երթին մէջ իր հետը եղող զաւակներէն ու թոռներէն, ինչպէս նաեւ ուրիշ ազգականներէն ոմանք արդէն մեռած էին, հասան Մեսքենէ: Յովակիմ, իբրեւ արհեստաւոր, շրջան մը կրցաւ այստեղ մնալ իր հարազատներուն հետ, որ քան որ անոնք դեռ կ'ապրէին: Տասնեակ հազարաւոր տարա գրուածներ կու գային ու կ'երթային՝ շարունակելով իրենց մահուան ճամբան: Յովակիմ շնորհիւ, իր Աստուածաշունչին, շատերուն եղաւ մխիթարող մը, իրենց մահուան չուերթին մէջ գտնուող այդ մահապարտներուն անոր մէջէն ընթերցելով շարունակ:

Պատերազմը վերջապէս աւարտեցաւ: Այժմ մեր Յովակիմն ալ իր հարազատներուն հետ կրնար իր հայրենիքը վերադառնալ: Ո՞ւր կրնար ըլլալ գէթ իր որդին՝ Արթիւրը: Ան յատկապէս զինք յիշած էր իր ամէնօրեայ աղօթքներուն մէջ: Ու տես, վերադարձի ճանապարհին անսպասելիօրէն ան կը յայտնուի Հալէպի մէջ: Ուրեմն ան ողջ մնացած էր, եւ պատերազմի ընթացքին թուրքիոյ թշնամիներուն միանալով մարտնչած էր ռիսերիմ թշնամի՝ թուրքերուն դէմ: Ան իր գինուորական համազգեստով կը ներկայանայ իր հարազատներուն: Գոհար մը, երիտասարդ փեսացո՞ւ մը: Իսկ երբ ան իր ծերունի հօրմէն տեղեկանալ կ'ուզէ եթէ ան տեղահանութեան միջոցին իր հետ նաեւ վերցուցած էր իր ունեցուածքին արժէքաւոր կալուածագրերը, ան կը պատասխանէ թէ ամենաթանկագինը՝ իր Աստուածաշունչը փրկած էր, բայց բոլոր մնացածը՝ ո՛չ: «Դուսն դեռ պիտի հասկնաս, կը շարունակէ ան, որ օր մը Աստուածաշունչը քեզի համար ալ պիտի ըլլայ ամենամեծ գանձը»:

Յովակիմ նմանապէս տարագրուեցաւ իր հարազատներուն հետ: Միասին գրեթէ ոչինչ կարելի էր վերցնել, լոկ այն՝ ինչ հնարաւոր էր կրել: Մնացած բոլորը պէտք էր ետին ձգել: Վերցնելով խուրձին մը, ինչպէս Արեւելքի մէջ սովորութիւն էր գործածել, ան իր մեծ եւ ծանր Աստուածաշունչը դրաւ անոր գրպանը: Առանց ասոր ինք չէր կրնար երթալ այդ մահուան ուղին: Աստուածաշունչը իրեն մխիթարութիւն եւ քաջութիւն պիտի պարգեւէր, ու ամէն օր, իր երկարատեւ ճամբորդութեան ընթացքին, ան գտաւ անոր մէջ այն ինչ որ ինք, նաեւ իրեն հետ շատ մը ուրիշներ, պէտք ունէին:

Յովակիմ նմանապէս տարագրուեցաւ իր հարազատներուն հետ: Միասին գրեթէ ոչինչ կարելի էր վերցնել, լոկ այն՝ ինչ հնարաւոր էր կրել: Մնացած բոլորը պէտք էր ետին ձգել: Վերցնելով խուրձին մը, ինչպէս Արեւելքի մէջ սովորութիւն էր գործածել, ան իր մեծ եւ ծանր Աստուածաշունչը դրաւ անոր գրպանը: Առանց ասոր ինք չէր կրնար երթալ այդ մահուան ուղին: Աստուածաշունչը իրեն մխիթարութիւն եւ քաջութիւն պիտի պարգեւէր, ու ամէն օր, իր երկարատեւ ճամբորդութեան ընթացքին, ան գտաւ անոր մէջ այն ինչ որ ինք, նաեւ իրեն հետ շատ մը ուրիշներ, պէտք ունէին:

(1) Յունարէնի «diakonia» բառակապակցութեան սերտը փրիստունէական ըմբռնումը, որուն հիմնական նպատակը ծառայասիրութեան ոգին կը կազմէր, «Caritas»-ի նման կ'իրականացնէր հիմնական առաքելութիւն մը՝ հասնիլ չփառութեան հետեւանով բշտաւարացած մարդոց, ծառայասիրական գործունէութեամբ նպաստել աղիւստներու ընկերային կեանքի բարելաւումին, խնամել տարատեսակ հիւանդութիւններէ տառապող հիւանդները՝ փոխանցելով անոնց ընկերային-հասարակական միջավայրէն, բայց յատկապէս՝ Աստուծմէ սիրուած եւ ընդունուած ըլլալու արժանապատուութեան գիտակցութիւնն ու զգացումը: Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ էր ունենալ համա-պատասխան մարդու մը ծառայողներու, առաքելներու, բժիշկներու, հիւանդախնամներու, դաստիարակներու, ֆարգիչներու եւ ուսուցիչներու, որոնք պատրաստ պիտի գտնուէին նմանօրինակ անձնորդ ծառայասիրական աշխատանքներ կատարելու: Այս հեռանկարով, ահա ահա, երոպայի ընդհանրապէս աւետարանական եկեղեցիներու միջավայրին մէջ սկսան հետզհետէ հիմնուիլ ծառայասիրութեան ուսումնարաններ, որոնք իրենց հաստատութիւններուն տուիլ յունարէնի «diakonia» եզրը: Զուիցեք Պագէլ Բաղաթին մէջ առաջին անգամ 1889-ին հիմնադրուեցաւ նման ուսումնարան մը՝ «Diakonienhaus», բառացի՝ «Արկաւազաց Տուն», իմա՝ «Ծառայողներու Տուն» անունով: Հոս էր որ կը դիմէր Եազոպ Քիւնցլեր 1891-ին, ստանալու համար հիւանդախնամի կրթութիւն:

(2) Գերմաներէն բնագրէն հայերէն թարգմանութիւնը՝ Ա. Քե. Մանուկեանի: